

## ԸՍՏ ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԷԿ ՈՒՂԻ ԿԱՅ

Հայ-թրքական արձանագրու-  
թիւնները վերակենդանացնելու  
միայն մէկ ուղի գոյութիւն ունի:  
Այս մասին ակտորիական «Der  
Standard» օրաթերթին տուած հար-  
ցազրոյցի ընթացքին ըսած է Հա-  
յաստանի արտաքին գործոց նա-  
խարար Էդուարդ Նալբանդեան:  
«Գոյութիւն ունի միայն մէկ ուղի,  
եւ ոչ թէ մի քանի: Մենք ստո-  
րագրել ենք արձանագրութիւննե-  
րը եւ մենք պէտք է դրանք վաւե-  
րացնենք եւ իրականացնենք առանց  
որեւէ նախապայմանների՝ համա-  
ձայն pacta sunt servanda սկզբուն-  
քի», - ըսած է նախարարը:

Լրագրողի այն հարցին, թէ  
արդեօք կարելի կը դառնայ Ար-  
ձանագրութիւններու վաւերացու-  
մը Յունիսին Թուրքիոյ մէջ կայա-  
նալիք խորհրդարանական ընտ-  
րութիւններէն ետք», Նալբանդեան  
պատասխանած է. «Խորհրդարա-  
նական ընտրութիւններէից յետոյ  
կը լինեն ուրիշ ընտրութիւններ:  
Եթէ պատճառ էք փնտռում վաւե-  
րացումը յետաձգելու համար, ապա  
միշտ կարող էք այն գտնել: Կար-

Շաբ.ը էջ 4

## 50 ՀԱՉԱՐ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱՒ ՄԱՐՏ 1-Ի ՍՊԱՆԴԻ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

2008-ի Փետրուար 19-ի նա-  
խագահական կեղծուած ընտրու-  
թիւններուն յաջորդած նստա-  
ցոյցը Երեւանի Ազատութեան հրա-  
պարակին վրայ աւարտեցաւ քո-  
չարեանկան բռնապետութեան կողմէ  
կազմակերպուած սպանդով, որուն  
զոհ գացին տասը անմեղ քաղա-  
քացիներ: Մինչեւ օրս բացայայտ-  
ուած չեն սպանութիւններու հան-  
գամանքները ու պատժուած չեն  
մեղաւորները:

Ընդդիմադիր Հայ Ազգա-  
յին Գոնկրէսի հրաւիրով Երեքշաբ-  
թի, Մարտ 1-ին աւելի քան 50  
հազար ցուցարարներ հաւաքուած  
էին Մատենադարանի առջեւ՝ նշե-  
լու համար ողբերգական այդ իրա-  
դարձութեան 3-րդ տարելիցը:  
Գոնկրէսի առաջնորդ Լեւոն Տէր-  
Պետրոսեան իր ելոյթի ընթացքին  
յայտարարեց. - «Սա մեր վերջին  
զգուշացումն է իշխանութիւննե-  
րին: Սթափուեցէք»:

Հայաստանի առաջին նախա-  
գահը իր ելոյթի ընթացքին ներ-  
կայացուց շարք մը պահանջներ՝  
ուղղուած գործող իշխանութիւն-  
ներուն: Այդ պահանջներու զգալի  
մասին կատարման պարագային  
Տէր Պետրոսեան խնդրեց հանրա-  
հաւաքի մասնակիցներու լիազօ-  
րութիւնը՝ երկիտուութիւն սկսելու



Տասնեակ հազարաւոր ցուցարարներ կը քայլեն Երեւանի փողոցներով

իշխանութիւններու հետ, օրա-  
կարգի վրայ ունենալով միակ հարց՝  
յառաջիկայ ամիսներուն արտա-  
հերթ նախագահական եւ խորհր-  
դարանական ընտրութիւններ կազ-  
մակերպելու հարցը:

Ներկայացուած պահանջնե-  
րու շարքին էին՝ մինչեւ Մարտ  
15-ը ազատ արձակել քաղաքական

բոլոր բանտարկեալները, ստեղծել  
Մարտի 1-ի իրադարձութիւննե-  
րու ուսումնասիրութեան անկախ  
միջազգային յանձնաժողով, այնպ-  
պաղ վերականգնել զարաբաղ-  
եան բանակցութիւններու նախկին  
ձեւաչափը եւ այլն:

Շաբ.ը էջ 4

## ԱՄՆ-Ի ԴԵՍՊՈՒՆԸ ԿՈՉ Կ'ԸՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեւանի մօտ Ամերիկայի  
Միացեալ Նահանգներու դեսպան  
Մարի Եովանովիչ շեշտած է  
«խոր եւ արմատական փոփոխու-  
թիւններու» անհրաժեշտութիւնը՝  
Հայաստանի մէջ ժողովրդավարու-  
թեան եւ քաղաքական երկիտու-  
թեան աշխուժացման համար:

Երկուշաբթի, Փետրուար 28-  
ին Երեւանի պետական համալսա-  
րանէն ներս ներկայացնելով  
«Քաղաքացիական հասարակու-  
թիւնը Հայաստանի մէջ» խորա-  
գիրը կրող գեկոյց մը, դեսպանը  
ըսած է, որ որեւէ պետութեան թիւ  
մէկ դերակալութիւնը իր քաղա-  
քացիներու համար անվտանգու-  
թեան ապահովումն է:

«Սակայն մենք տեսած ենք  
տարբեր ժամանակներու մէջ եւ  
տարբեր ցամաքամասերու վրայ,  
որ երբ քաղաքացիները չեն հաւա-  
տար, որ իրենց կառավարութիւնը  
կը ներկայացնէ իրենց շահերը,  
ապա չի կրնար ապահովել իսկա-  
կան անվտանգութիւն», - ըսած է  
դեսպան Եովանովիչ:

«Քաղաքացիները ինչքան  
շատ տեղեկութիւն ունենան, այդ-  
քան աւելի լաւ կը դառնայ անոնց  
կայացուցած որոշումները: Մենք  
կրնանք ըլլալ ճիշդ կամ սխալ,  
սակայն միայն Հայաստանի ժողո-  
վուրդն է որ, իրաւասու է եզրա-



ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչ

յանգում ընել՝ բոլորի համար  
ազատ բանավէճի ու ազատ եւ  
արդարացի ընտրութիւններու մի-  
ջոցով», - յայտարարած է դեսպա-  
նը:

Մարի Եովանովիչի կարծի-  
քով, ժողովրդավարութեան խո-  
րացման եւ քաղաքական երկիտ-  
ուութեան աշխուժացման համար  
անհրաժեշտ է բարեփոխումներ  
իրականացնել Հայաստանի օրէնք-  
ներուն մէջ:

Դեսպանը ըսած է, որ օրէնք-  
ները հաւասար եւ հետեւողական  
պէտք է կիրառուի անխտիր բոլո-  
րի նկատմամբ, որ խաղաղ, օրի-  
նական հաւաքները չցրուուին,  
զանգուածային լրատուամիջոցնե-

Շաբ.ը էջ 4

## ԺԱՆ ՕՂԱՍԱԲԵԱՆ ՉԼԻՄԻՈՐ ԲԱՆԱԽՕՍՆ ԵՐ ՈԱՖԻՔ ՀԱՐԻՐԻԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՅՈՒՇԱՀԱՆԴԵՍԻՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ



Կիրակի, Փետրուարի 27-ին,  
2011, կէսօրէ ետք ժամը 5-ին,  
Պէվլըրի Հիլզի «Հիլթըն» պանդո-  
կի հանդիսասրահին մէջ տեղի  
ունեցաւ Լիբանանի նախկին վար-  
չապետ Ռաֆիք Հարիրիի նահա-  
տակութեան 6-րդ տարելիցին  
նուիրուած իշխանութեան հանդիսու-  
թիւնը կազմակերպութեամբ՝  
«Մուսթաքպալ» շարժումի Լոս  
Անճելըսի մասնաճիւղին:

Այս առթիւ որպէս գլխաւոր  
բանախօս հրաւիրուած էր

Լիբանանահայ նախարար Տիար  
Ժան Օղասաբեան:

Հարաւային Գալիֆորնիոյ  
տարբեր շրջաններէ ժամանած բազ-  
մահարիւր հրաւիրեալներ եկած  
էին իրենց յարգանքի տուրքը մա-  
տուցանելու Լիբանանցի մեծ հայ-  
րենասէրին:

Ներկայներուն մէջ կը գտնուէ-  
ին Լոս Անճելըսի մօտ Լիբանանի  
հիւպատոսուհի՝ Տիկ. Մատոնա

Շաբ.ը էջ 5

# ԿԵՂԾԻՔԻ ԵՒ ԿՈՂՄՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՒ

## ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Երեւի շատերն են նկատել, որ Հայաստանի քաղաքական կեանքում կամ տնտեսական դաշտում տեղի ունեցող ցանկացած իրադարձութեան հիմքում բացառապես կեղծիքն է, եւ որքան մօտենում են ընտրութիւնները, այնքան կեղծիքի «դոզան» աւելանում է: Խօսքն, իհարկէ, միայն վարչապետ Տիգրան Սարգսեանի մասին չէ, վերջին հաշուով՝ նա վաղուց արդէն ոչ թէ վարչապետ է, այլ տնտեսական ոլորտի մի տեսակ քայլող անեկղոտ, որն, ի դէպ, որոշակի դերական դերակատարում ունի (մարդիկ լսում են նրա ելույթները, մի լաւ հայհոյում, եւ սոցիալական լարուածութիւնը որոշ չափով լիցքաթափւում է):

Խնդիրն այն է, որ քաղաքական դաշտում նոյնպէս ամէն ինչ հիմնուած է կեղծիքի վրայ: Օրինակ՝ ընդդիմութիւնը հանրահաւաք է կազմակերպում, եւ այդ օրը Երեւան մտնող բոլոր ճանապարհները փակուում են: Իշխանութիւնները ձեւացնում են, թէ «Վահան» օպերացիա են իրականացնում, բայց իրական նպատակը մէկն է՝ թոյլ չտալ, որ մարզերից մարդիկ գան: Ինչո՞ւ: Որպէսզի ժողովրդին խաբեն, թէ իբր «տեսէք՝ ընդդիմութեան հանրահաւաքին ընդամէնը մի 10 հազար մարդ է մասնակցում»: Կամ, ասենք, որեւէ կոմիկական կերպար ի պաշտպանութիւն Սերժ Սարգսեանի «միջոցառում» է կազմակերպում, եւ իշխանութիւնները հնարաւոր բոլոր լծակներով փորձում են ճոխացնել այդ արարողութիւնը: Ինչո՞ւ: Որպէսզի խաբեն մարդկանց եւ ցոյց

տան, թէ «տեսէք՝ այսքան մարդ կողմ է Սերժ Սարգսեանին»: Խաբէութեան վրայ է հիմնուած նաեւ քաղաքական միւս ուժերի գործունէութիւնը: Տիգրան Կարապետին, օրինակ, մի քանի հարիւր հոգի է հաւաքում ու իշխանութիւններին կարմիր քարտ ցոյց տալիս, յետոյ էլ յայտարարում է, թէ Մարտի 1-ին Միասնիկեանի արձանի մօտ մոմավառութիւն է կազմակերպելու եւ ապացուցելու է, որ ընդդիմութիւնը միասնական չէ (որովհետեւ այդ պահին այդտեղ

պակաս չկար: Ճիշդ է: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ այսօր այդ անառարկելի փաստը «դրօշակ դարձնելն» արդէն իսկ համընդհանուր կեղծիքի «անբաժանելի մասն է»: Եւ խնդիրն այն չէ, որ, ասենք, ՀՀԾ-ի իշխանութեան տարիներին Երեւանի կենտրոնում մեծամասնական ընտրակարգով պատգամաւոր է ընտրուել Դաշնակցութեան ներկայացուցիչը, իսկ այսօր նման բան պատկերացնելն անհնար է: Խնդիրն այն է, որ օբիեկտիւօրէն Դաշնակցութեանն այսօր նորմալ

Սերժ Սարգսեանի իշխանութիւնը վախենում է ոչ թէ որեւէ քաղաքական ուժից, այլ ժողովրդից, իսկ ընդդիմութիւնն իր հերթին ձգտում է յենուել ոչ թէ որեւէ արտաքին ուժի, այլ ժողովրդի աջակցութեան վրայ

չէ): Կամ, ասենք, դաշնակներն ինչ-որ շարժում են սկսում յանուն արդար ընտրութիւնների (ներողութիւն ենք խնդրում «դաշնակներ» եւ «արդար ընտրութիւններ» բառերը կողք կողքի օգտագործելու համար): Ինչո՞ւ: Որպէսզի խաբեն մարդկանց եւ փորձեն համոզել, թէ իրենք միշտ երազել են արդար ընտրութիւններ (իսկ իրենցից բացի բոլորը կեղծել են այդ ընտրութիւնները): Դաշնակները մօտ 10 տարի իշխանութեան են եղել, եւ ամենապայանդակ ընտրակեղծիքներն արձանագրուել են յատկապէս այն մարզերում, որտեղ մարզպետները (համապատասխանաբար՝ նաեւ համայնքապետները) դաշնակներ են եղել: Կարող են առարկել, թէ ՀՀԾ-ի իշխանութեան տարիներին նոյնպէս ընտրակեղծիքներ

ընտրութիւններ պէտք չեն, իսկ Կոնգրէսին պէտք են: Ինչո՞ւ: Որովհետեւ կեղծուած ընտրութիւնների դէպքում Դաշնակցութիւնը կը ստանայ, ասենք, 3 տոկոս, չկեղծուածի դէպքում՝ 6-7 տոկոս (տարբերութիւնը մեծ չէ), իսկ Կոնգրէսի պարագայում բոլորովին այլ պատկեր է. կեղծուած ընտրութիւնների դէպքում Կոնգրէսը կը ստանայ 7-8 տոկոս, չկեղծուածի դէպքում՝ առնուազան 40: Այնպէս որ, իրականում Հայաստանի քաղաքական դաշտում այսօրուայ դրութեամբ միայն մի ուժ կայ, որին իսկապէս նորմալ ընտրութիւններ են պէտք: Ինչ վերաբերում է այս համատարած կեղծիքին, ապա այս ամէնի մէջ մի դրական բան այնուամենայնիւ կայ. եթէ նկատեցիք՝ բոլորը ձգտում են խաբել ժողովրդին (եթէ «խաբել» բառը կոպիտ

է հնչում՝ կարող ենք օգտագործել «ապակողմնորոշել» բառը): Իսկ դա իր հերթին նշանակում է, որ Հայաստանում ժողովուրդը ուշալուծ է, եւ ներքաղաքական պայքարի արդիւնքն ի վերջոյ կախուած է լինելու նրանից, թէ ո՞ւմ հետեւից կը գնայ ժողովուրդը: Այսինքն՝ Հայաստանը, մեծ հաշուով, ժողովրդավարական երկիր է, որովհետեւ վերջնական որոշում կայացնողն այնուամենայնիւ ժողովուրդն է: Եթէ ժողովուրդը ոչինչ չորոշեր, ժողովրդին խաբելու ջանքերն էլ անիմաստ կը լինէին: Եւ հենց սա է պատճառը, որ Սերժ Սարգսեանի իշխանութիւնը վախենում է ոչ թէ որեւէ քաղաքական ուժից, այլ ժողովրդից, իսկ ընդդիմութիւնն իր հերթին ձգտում է յենուել ոչ թէ որեւէ արտաքին ուժի, այլ ժողովրդի աջակցութեան վրայ:

Հ.Գ. Ի դէպ, նկատէ՞լ էք, թէ ժողովրդի յատկապէս որ հատուածին են ձգտում խաբել բոլորը՝ իշխանութիւնները, քաղաքական ուժերը, լրատուամիջոցները եւ այլն: Նրանց, ովքեր իրենք իրենց հեռու են պահում քաղաքական կեանքից եւ առայժմ «կողմնորոշուած չեն» (արդէն իսկ կողմնորոշուածներին խաբելն անհնար է): Այսինքն՝ իրական ուժը ժողովրդի հենց այդ հատուածն է: Այսօրուայ հանրահաւաքն, ի դէպ, «կողմնորոշուելու» հրաշայի հնարաւորութիւնն է: Չնայած՝ դատելով ամէն ինչից, առաջիկայում նման հնարաւորութիւնների պակաս չի զգացուի:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՍՏԻՏՈՒԹԻՒՆ»

## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԿԱՅԱՑԱԻ

### ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄՆԱՆ

Հայ Ազգային Կոնգրէսի հանրահաւաքը ռուսական որոշ լրատուամիջոցներում «հիասթափութիւն» է առաջացրել այն հաշուով, որ ԱՄՆ դեսպանի կոչերը՝ «ապստամբելու», չեն իրականացուել:

Իսկապէս, Մարտի 1-ին Երեւանում տեղի չուներ դասական յեղափոխութիւն: Սակայն որոշակի իմաստով յեղափոխութիւնը կայացաւ՝ առաջին անգամ ընդդիմութիւնը ժողովրդի անունից իշխանութեան առջեւ դրեց յատակ շարադրուած պահանջներ եւ դրանց իրականացման ժամկէտ: Առաջին անգամ ժողովուրդը յայտարարեց պետական որոշումներ կայացնելու գործում մասնակցելու իրաւունքի մասին:

Որոշակիօրէն, յեղափոխութիւն տեղի ունեցաւ իշխանութեան գիտակցութեան մէջ, որը հապշտապ ինչ որ քայլեր է անում, արդէն չթաքցնելով, որ դա անում է հասարակութեան չնչման տակ: Իշխանութեան բազմամեայ հոգեբանութիւնը, ըստ որի ամօթ է նոյնիսկ հասարակական կարծիքը լսելը, եւ առանց ժողովրդի կողմ նայելու գործունէութիւնը, կոտորուել է: Եւ դա վերջին մի քանի ամիսների գլխաւոր արդիւնքն է:

Արաբական աշխարհում իրողարձութիւնները, ինչպէս նաեւ հայաստանում յաճախակիացած բողոքի ակցիաները վկայում են, որ երբեւէ գալիս է նախկին քաղաքականութեան համար պատասխան

Արաբական աշխարհում իրողարձութիւնները, ինչպէս նաեւ հայաստանում յաճախակիացած բողոքի ակցիաները վկայում են, որ երբեւէ գալիս է նախկին քաղաքականութեան համար պատասխան տալու ժամանակը: Այդ պատճառով, աւելի անվտանգ է կիսել պատասխանատուութիւնը հասարակութեան հետ, որպէսզի յետոյ հասարակութիւնը պատճառ չուներ այդ մեղադրելու համար

տալու ժամանակը: Այդ պատճառով, աւելի անվտանգ է կիսել պատասխանատուութիւնը հասարակութեան հետ, որպէսզի յետոյ հասարակութիւնը պատճառ չուներ այդ մեղադրելու համար:

Այս տեսակէտից յատկանշական են գործընթացները, որոնք ներկայումս տեղի են ունենում հայկական խորհրդարանում: Ստեղծուած է յանձնաժողով, որ ուսումնասիրելու է զգալի գնազոյցման հարցը, որը կարող է «չօրհան» մինչ օրս անձեռնմխելի Հայրուսզգաբարդը:

Հետաքրքիր է նաեւ կառավարութեան նախաձեռնութիւնը, ըստ որի մրցակցային յանձնաժողովին տրուած են աւելի լայն լիազօրութիւններ, ինչպէս նաեւ մտադրութիւնը՝ պատժել սուբիեկտներին, որոնց ոլորտներում տեղի են ունենում 30 տոկոս թանկացումներ: Դա նշանակում է, որ մենատէրերը պէտք է սահմանափակեն իրենց ախորժակը:

Առանց հասարակական ճնշման այս քայլերը դժուար է պատկերացնել: Եւ ամենակարեւորը՝ հայաստանում գրեթէ չի մնում ոլորտ, որ փակ լինի հասարակական քննարկումների համար:

Աւտորիտար ոչ հրապարակային կառավարման վերջին «պատուաբեր» բանակը, «ընկաւ» անցեալ տարի, երբ հասարակութիւնը բարձրաձայն սկսեց խօսել բանակի խնդիրներից: Հերթում, ըստ ամենայնի, եկեղեցին է, եւ շուտով թերեւս կը լինեն բուռն քննարկումներ այս թեմայով:

Յեղափոխութիւնն իսկապէս կատարուեց: Հակառակ պարագայում, հայ չինովնիկներն անպայման իրենց դժգոհութիւնը կը յայտնէին ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչի դասախօսութեան կապակցութեամբ: Սակայն, ինչպէս տեսնում ենք, ոչ ոք պաշտօնապէս նրան չմեղադրեց Հայաստանի ներքին գործերին միջամտելու մէջ: Այն պատճառով, որ դա կարող էր ընկալուել որպէս ժողովրդավարացմանը դիմադրելու փորձ:

Իսկ ներկայումս ժողովրդավարացումը դարձել է իշխանութեան միակ փրկութիւնը: Իշխանութիւնը սկսում է հասկանալ, որ հասարակական կարծիքին ունկնդիր լինելը, նոյնիսկ եթէ դա «գոհեր» է պահանջում, աւելի անվտանգ է, քան դիմադրելը:

«ԼՐԱԳԻՐ»

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՉԱՍՆՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՉԱՐԻԵԼ ՄՈԼՈՅԵԱՆ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ԶԻ ԲԱՑԱՌԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԻՐԵՆՑ ԱԹՈՒՆԵՐԷՆ ԶՐԱԺԱՐԵԼՈՒ ԶՆԱՐԱԴՈՐՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 28-ին սկսած Ազգային ժողովի քառօրեային «Ժառանգութիւն» խմբակցութիւնը ամբողջ կազմով լքեց խորհրդարանի դահլիճը: Նիստի սկիզբը կուսակցութեան վարչութեան նախագահ Բաֆֆի Յովհաննիսեան ելոյթով հանդէս եկաւ՝ յայտարարելով, որ Ազգային ժողովի [թէ] մեծ, [թէ] քառօրեայ օրակարգը պէտք է արտայայտէ ժողովուրդի պահանջները, որ, ըստ իրեն, այդպէս է: Միախառն կառավարութեան նոր յուշագիրը ան որակեց «Հակասահմանադրական, որուն նպատակը խորհրդարանական ընդդիմութեան սակաւաթիւ աթոռները գրաւելն է»:

Միախառն կառավարութեան յուշագրի ստորագրումը, ըստ Բաֆֆի Յովհաննիսեանի, կը նշանակէ՝ «Եւ եօթը տարի պիտի շարունակուի պետական ինքնիշխանութեան վնասող արտաքին քաղաքականութիւնը»: Իսկ ներքին քաղաքականութեան մէջ, ըստ անոր, յուշագիրը «կը խորացնէ անհաւասարութիւնն ու անօրինականութիւնը, որ պիտի շարունակուի եւս եօթը տարի»:

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդի ելոյթը կիսատ մնաց, քանի որ ԱԺ փոխնախագահ Սամուէլ Նիկոյեան անջատեց խօսափող՝ պատճառաբանելով, որ Յովհաննիսեանի ելոյթը կապ չունի ԱԺ օրակարգին հետ եւ ելոյթին յատկացուած ժամանակը սպառուած է: Բաֆֆի Յովհաննիսեան իր ելոյթը շարունակեց տեղէն եւ

յայտարարեց. «Խորհրդարանում ընդդիմութեան եւ իշխանութեան ներկայ համամասնութիւնը չի բաւականացնում կուսակցապետերի ախորժակը, եւ նրանք իրենց հայեացքն ուղղել են սակաւաթիւ ընդդիմադիր այս աթոռների վրայ»:

Այս յայտարարութիւնէն ետք, «Ժառանգութիւն» խմբակցութիւնը ամբողջ կազմով լքեց խորհրդարանի դահլիճը:

Խմբակցութեան ղեկավար Ստեօպա Սաֆարեան լրագրողներուն ըսաւ, որ իրենց խմբակցութիւնը եւ կուսակցութեան վարչութիւնը համատեղ նիստ պիտի հրաւիրեն, որոշելու ներկայ իրավիճակին մէջ իրենց հետագայ ընելիքները: Ան չբացառեց, որ նիստին քննարկուի խորհրդարանի իրենց աթոռներէն հրաժարելու հարցը:

«Ժառանգութիւն» կուսակցութեան յայտարարութեանէն ետք, Դաշնակցութիւնը խնդրեց 20 վայրկեան ընդմիջում՝ խորհրդարանական գործընկերներուն հետ իրավիճակը քննարկելու համար: Այդ ընթացքին, Վահան Յովհաննիսեան լրագրողներուն ըսաւ, «Մենք գտնում ենք, որ մեր գործընկերների («Ժառանգութիւն» կուսակցութեան) անալիզը (վերլուծումը, Tert.am) քաղաքական իրավիճակի, որոշ քաղաքական ուժերի չհիմնաւորուած ախորժակների աճի վերաբերեալ ճիշդ է, բայց լուծումը, որ նրանք առաջարկում են, թաքթիքական բնույթի է եւ իրենց որոշելիքն է»:

ԻՐԱԿԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում անցած տարում մարդու իրաւունքների իրավիճակի վերլուծութիւնը Հելսինքեան ասոցիացիա իրաւապաշտպան կազմակերպութեանը հիմք է տալիս պնդելու, որ մարդու իրաւունքներն ու հիմնարար ազատութիւնները «կոպտօրէն խախտուած են»:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը Երկուշաբթի, Փետրուար 28-ի զեկոյց է հրատարակել, որում մասնաւորապէս ասուած է. - «Հայաստանի իշխանութիւնները շարունակում են անտեսել ԵՆԽՎ-ի 4 բանաձեւերի պահանջները, 2008-ի մարտիմէկեան իրադարձութիւնների կապակցութեամբ ձերբակալուած անձանցից 9-ը դեռեւս անազատութեան մէջ են, որոնց Հելսինքեան ասոցիացիան միջազգային չափանիշները համաձայն համարում է քաղաքացիական»:

Ուսումնասիրութիւնը կատարուել է «Հայաստանում մարդու իրաւունքների վիճակի մոնիթորինգի» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ֆինանսաւորմամբ:

Պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ 2010-ին բարելաւուել է արդեօք իրավիճակը նախորդ տարուայ համեմատ, Հելսինքեան ասոցիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեանը յայտարարեց. - «Միանշանակ պրոգրէս (յառաջընթաց) չկայ»:

Խօսքի ազատութեան սահմանափակումներին վերաբերող մասով զեկոյցը փաստում է, որ 2010 թուականին գրանցուել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնութեան՝ 9, ԶԼՄ-ների եւ դրանց



Հելսինքեան ասոցիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեան

աշխատակիցների վրայ ճնշումների՝ 19 դէպք:

«Բռնութիւնների դէպքերից կարելի է նշել Նիկոլ Փաշինեանի նկատմամբ «Կոչ» քրէակատարողական հիմնարկում 2010-ի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսների ընթացքում տեղի ունեցած բռնութիւնները, ինչպէս նաեւ Մայիսի 28-ից Յունիսի 2-ը «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Անի Գէորգեանի նկատմամբ կիրառուած բռնութիւնը», - նշեց զեկոյցի համահեղինակներից Մարինա Գասպարեանը:

Զեկոյցը նաեւ ընդգծում է, որ անցած տարի շարունակուել են խոշտանգումներն ու բռնութիւնները ոստիկանութիւնում եւ զինուած ուժերում:

Միքայէլ Դանիէլեանը տեղեկացրեց, որ զեկոյցն ուղարկուել է Հայաստանի նախագահի գրասենեակ, պաշտպանութեան նախարարութիւն, գլխաւոր դատախազութիւն, ոստիկանութիւն եւ արդարադատութեան նախարարութիւն:

ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՑԱԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՇՏՊԱՆ

Հայաստանի Ազգային ժողովը ձայների 83 կողմ եւ 13 դէմ յարաբերակցութեամբ կարէն Անդրէասեանին ընտրեց Մարդու իրաւունքների պաշտպան:



Կարէն Անդրէասեան՝ Մարդու իրաւունքներու նոր պաշտպան

Ընտրութիւնից յետոյ Մարդու իրաւունքների նոր պաշտպանը երդուեց պաշտպանել մարդու, քաղաքացու իրաւունքներն ու ազատութիւնները իր լիազօրութիւնները կատարելիս՝ լինելով անաչառ եւ ջանասէր:

33-ամեայ Անդրէասեանը իրաւաբանական գիտութիւնների թեկնածու է, Հայաստանի փաստաբանների պալատի անդամ, Երեւանի պետհամալսարանի դոցենտ: 2008 թուականից մինչ օրս «Դիֆենս» իրաւաբանական ընկերութեան տնօրէնն է: Վերջին տարիներին իրականացրել է մի շարք հեռուստատեսային եւ հասարակական նախագծեր, վարել է «Երկիր թէմա» հաղորդաշարը «Երկիր մեդիա» հեռուստաընկերութիւնում եւ «Իրականում» հաղորդաշարը՝ «Արմենիա» հեռուստաընկերութիւնում:

Կարէն Անդրէասեանի թեկնածութիւնը օմբուդսմէնի պաշտօնում առաջադրել էր իշխանական կոալիցիան՝ Հանրապետական կուսակցութեան առաջարկութեամբ:

«Ժառանգութիւն»-ը շաբաթուաչ սկզբից բողոքում է ԱԺ-ի աշխատանքները, իսկ ՀՅԴ-ն յայտարարեց, որ դէմ է Անդրէասեանի թեկնածութեանը:

Իր խօսքում Անդրէասեանը ասաց, թէ օմբուդսմէնի գործը իր համար «սերվիս է, որը պէտք է

մատուցուի անվճար, բայց որակով»: Նա գիտակցում է, որ օմբուդսմէնը չի կարող լինել քաղաքականութիւնից հեռու: Անդրէասեանը կարեւորեց նաեւ քաղաքացիների տեղեկացուածութեան մակարդակի բարձրացումը:

«Մարդիկ պէտք է իմանան՝ երբ կարելի է դիմել պաշտպանին, երբ՝ ոչ պաշտպանին», - ասաց նա:

ԱԺ-ում առաւօտեան գրանցուած աւելի քան 9 տասնեակ պատգամաւորներից ընդամէնը 7-ը հարցեր ունէին պաշտպանի թեկնածուին: Հարցեր հնչեցին Հայաստանում ընտրական իրաւունքի խախտումների, ժողովրդավարութեան սակարկութիւն, քաղաքական փոքրամասնութեան ընդդիմութեան իրաւունքների անբաւարար պաշտպանութեան, Հայաստանում քաղաքական հաշտեցման համար ազատագրուած անձանց առկայութեան մասին:

ԴԱՏԱՐԱՆԸ ՎՃՈՒՑ ԿԱԼԱՆՔ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԳԱՍԱԴՈՐԻ ԵՂԲՕՐ ՆԿԱՏԱՍԲ

Երեւանի կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը որոշեց պատգամաւոր Զարուհի Փոստանջեանի եղբօր՝ Տիգրան Փոստանջեանի նկատմամբ իբրեւ խափանման միջոց կիրառել երկամսեայ կալանքը:

Տիգրան Փոստանջեանի նկատմամբ իբրեւ խափանման միջոց կալանքն ընտրելու վերաբերեալ միջնորդութիւնը ներկայացրել է Ազգային անվտանգութեան ծառայութեան քննիչը:

Արաբկիրի թաղապետարանում որպէս առաջատար մասնագէտ աշխատող Տիգրան Փոստանջեանը ձերբակալուել է Փետրուարի 23-

ին: Նրա՝ անազատութեան մէջ գտնուելու 72 ժամը լրանում էր եւ դատարանը պարտաւոր էր մինչ այդ կայացնել որոշում խափանման միջոց ընտրելու կապակցութեամբ:

Համաձայն Գլխաւոր դատախազութեան տարածած հարցրդագրութեան, Տիգրան Փոստանջեանը, ով հանրային ծառայող է, կասկածուած է 100 հազար դրամ ապօրինի վարձատրութիւն ստանալու մէջ: Նա նախօրէին յայտարարութիւն էր հասցէագրել միջազգային կառույցներին, որտեղ նշել էր, թէ իր դէմ յարուցուած քրէական գործը քրոջ՝ Զարուհի Փոստանջեանի նկատմամբ քաղաքական հետապնդման արդիւնք է:

ՀՀԿ-Ն ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՔՆՆԱԴԱՏԵԼՈՒ ՓՈՒՍԱՐԷՆ ՆՐԱՆԻՑ ՕՐԻՆԱԿ ՎԵՐՑՆԵԼ

Համագործակցութեան մասին կոալիցիոն նոր յուշագիրը գալիք խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնների հետ կապուած, խանդ է առաջացրել միւս քաղաքական ուժերի մօտ, եւ նրանք, իզուր խանդելու փոխարէն աւելի լաւ կը լինէր, որ կոալիցիայից օրինակ վերցնէին: Փետրուարի 28-ին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց ԱԺ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը՝ մեկնաբանելով ԱԺ նիստերի դահլիճում կոալիցիոն յու-

շագրի հասցէին «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Բաֆֆի Յովհաննիսեանի հնչեցրած խիստ քննադատութիւնը:

«Ես կարծում եմ, որ հայաստանեան ընդդիմութիւնը պէտք է օրինակ վերցնի իշխող քաղաքական ուժերից եւ համախմբուի: Քանի որ առանձին գործելով եւ միմեանց քննադատելով ընդդիմադիր ուժերը յաջողութեան չեն հասնի: Կոալիցիայի օրինակը պէտք է նրանց համար ուսանելի լինի», - ընդգծեց Սահակեանը:

**ԼՈՒՐԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋԱԼԱԽՔՈՒՄ ՁԳՏՈՒՄ Է  
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆԵԼ. ՆՄԱՆ  
ԿԱՐԾԻՔԻ Է ԿՐԱՑԻ ՔԱՂԱՔԱԳԵՏԸ**

Հայաստանը Ջալախքում ձգտում է հակամարտութիւն առաջացնել, նման կարծիք է յայտնել Վրաստանի դիւանա-գիտական ակադեմիայի ղեկավար, քաղաքագետ Սոսո Յինցաձէն:

«Ջալախքում հայերի էքսպանսիան սկսուել է 19-րդ դարում, երբ ռուս զնդապետ Պասկեւիչը, Թուրքիայից 40 հազար հայ բերելով բնակեցրեց Ջալախքում: Այդպէս եղաւ նաեւ Աբխազիայում: Կոմունիստական Ռուսաստանը միշտ վստահ էր, որ Վրաստանը իրենց հպատակեցնելու ամենահեշտ եղանակը, այդ տարածքում հայերի բնակեցումն է, իսկ հայերն էլ ինչպէս նաեւ Ադրբեջանի հայերը միշտ եղել են Ռուսաստանի

իշխանութեան ազդեցութեան տակ», - ասել է քաղաքագետը ադրբեջանական Day.az-ին տուած հարցազրոյցում, գրում է վրացական «Պիւբլիկ» գործակալութիւնը:

Վրաստանի դիւանագիտական ակադեմիայի ղեկավար խօսքով, հայերը Ջալախքում ձգտում են հակամարտութիւն առաջացնել, որպէսզի արիւն թափուի:

«Հայերը ցանկանում են Ջալախքի տարածքում իրաւական կարգավիճակ ստանալ, սակայն դա անիրականանալի է, քանի որ Վրաստանը արդէն ամէն ինչ վերահսկում է: Ջալախքում մարդու իրաւունքները չեն խախտուում, ուղղակի հայերը ուզում են մեզ սաղարան քի ենթարկել», - նշել է նա:

**ԱԼԻԵԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ Է ԷՐԴՈՂԱՆԸ ՀՐԱՀԱՆԳԵԼ  
ՔԱՆԴԵԼ ԿԱՐՍԻ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ**

Թուրքիայի Կարսի նախկին քաղաքապետ Նախիֆ Ալիբէյջօղլուն յայտարարել է, թէ Կարսում հայ-թուրքական բարեկամութեանը նուիրուած արձանի քանդման հրահանգը կապուած է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի խնդրանքով:


Թուրքական Euractiv-ի փոխանցմամբ՝ Մարմարայի համալսարանի լրագրութեան ֆակուլտետի ուսանողները Կարս կատարած այցի ընթացքում հանդիպել են Կարսի նախկին քաղաքապետ Նախիֆ Ալիբէյջօղլուի հետ, խօսելով էրդողանի կողմից «հրէշաւոր» անուանուած «Մարդկութեան» յուշարձանի մասին:

Նախկին քաղաքապետը նշել է, թէ Կարսի բերդի հարեւանութեամբ բլուրի վրայ «Մարդկութեան» յուշարձանի ստեղծման գաղափարի դէմ հանդէս եկողներ չեն եղել: «Մենք քաղաքային խորհրդում որոշում ընդունեցինք ստեղծել այդ յուշարձանը: Դրան կողմ էին նոյնիսկ «Ազգայնական շարժում» կուսակցութեան անդամները: Մենք հանդիպեցինք քանդակագործ Մենհեդ Աքսոյի հետ, բացատրեցինք մեր նպատակը, իսկ նա սիրով համաձայնուեց» - ասել է Կարսի նախկին քաղաքապետը:

Նախիֆ Ալիբէյջօղլուն նշել է, թէ յուշարձանի քանդումը կապուած է մի խնդրանքի հետ: «Այդ խնդրանքը՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի խնդրանքն է: Մենք էլ Ադրբեջանից նաւթի, գազի կախուածութիւն ունենք: Քանդման միակ պատճառը սա է», - նշել է Ալիբէյջօղլուն:

Նշենք, որ օրեր առաջ Կարսի քաղաքային խորհուրդը ձայների մեծամասնութեամբ որոշում է կայացրել մաս-մաս քանդել «Մարդկութեան յուշարձան»-ը եւ տեղափոխել յարմար մի վայր:

Յիշեալ արձանի քանդումը կանխելու համար էրզրումի վարչական դատարան հայց է ներկայացրել: «Յայտնի քանդակագործ



հայ-թրքական բարեկամութեան մուխրուած արձանը՝ Կարսի մէջ

Մենհեդ Աքսոյի ստեղծած ժամանակակից թուրք արուեստի նմուշներից մէկը: Աքսոյի ստեղծած յուշարձանները զարդարում են Բեռլինի, Ստամբուլի եւ այլ քաղաքների տեսարժան վայրերը», - նշուել է հայցադիմումում:

NEWS.am-ը աւելի վաղ տեղեկացրել էր, որ Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Թայյիպ էրդողանը Կարս կատարած այցի ժամանակ «հրէշաւոր» էր անուանել հայ-թուրքական բարեկամութեան նուիրուած յուշարձանը եւ հրահանգել քանդել այն:

Կարսի նախկին քաղաքապետ Նախիֆ Ալիբէյջօղլուն տարիներ առաջ նախաձեռնել էր հսկայ արձանի ստեղծումը, որը պէտք է խորհրդանշէր հայ-թուրքական բարեկամութիւնը եւ խաղաղութիւնը: Սակայն 2009-ին քաղաքապետի ընտրութիւններում նա պարտութիւն կրեց: Անաւարտ արձանը անորոշ ճակատագրով տեղադրուեց Կարսի հին հայկական թաղամասին կից գտնուող բարձունքում:

**ԸՍՏ ԷՂՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ**

Մարտնակուած էջ 1-էն

Ծում եմ՝ այսօր թուրքական հասարակութիւնը մի կողմից աւելի շատ է տրամադրուած աջակցելու կարգաւորմանը, իսկ միւս կողմից, աւելի ըմբռնող է անցեալի նկատմամբ»:

Նալբանդեան աւելցուցած է որ, բանակցութիւններու մեկնարկը ու Արձանագրութիւններու ստորագրումը նոր պատուհաններ բացին: Անցեալ տարի առաջին անգամ մարդիկ Ապրիլ 24-ին հաւաքուած էին թրքական քաղաքներում մէջ՝ Հայոց ցեղասպանութեան օրը յիշատակելու համար:

**ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԸ ԿՈՉ Կ'ԸՆԷ**

Մարտնակուած էջ 1-էն

ըր զերծ մնան տարբեր կողմերէ եկող քաղաքական ճնշումներէ եւ եթէ արդարացիօրէն հասանելի դառնայ տարբեր գաղափարներու ու կարծիքներու համար:

«Այս նպատակով կը պահանջուի, որ յանցագործները, որոնք յարձակումներ կը գործեն լրագրողներու վրայ, բռնուին եւ պատասխանատուութիւն կրեն: Ատոր համար կը պահանջուի, որ կառա-»

րագրումը նոր պատուհաններ բացին: Անցեալ տարի առաջին անգամ մարդիկ Ապրիլ 24-ին հաւաքուած էին թրքական քաղաքներում մէջ՝ Հայոց ցեղասպանութեան օրը յիշատակելու համար:

Նալբանդեան նաեւ ըսած է, որ աշխարհի բոլոր երկրները, բացի Ատրպէյճանէն, կ'աջակցին հայ-թուրքական յարաբերութիւններու բարելաւման գործընթացին:

վարութիւնը, Հայաստանի հանրային հեռուստատեսութիւնը, Կենտրոնական ընտրական յանձնաժողովը, ռատիկանութիւնը, քաղաքական կուսակցութիւնները ապահովեն հետագայ ընտրութիւններու համապատասխանութիւնը ոչ միայն միջազգային չափանիշներուն, այլ նաեւ անոնց համապատասխանութիւնը Հայաստանի ժողովուրդի պահանջներուն ու ակնկալիքներուն», - ըսած է Ամերիկայի դեսպան Մարի Եովանովիչ:

**ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ  
ՀԱՆԴԻՊԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ**

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին Երեւանում ԱՄՆ դեսպանատնից, Հայաստան կատարած իր այցի շրջանակում Միացեալ Նահանգների պետքարտուղարի առաջին տեղակալ Ջէյմս Սթայնբերգը հանդիպել է քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների հետ: Հանդիպումը փակ է եղել մամուլի համար:



ԱՄՆ-ի պետքարտուղարի առաջին տեղակալ Ջէյմս Սթայնբերգ

Սերժ Սարգսեանը: Հանդիպմանը, որին մասնակցել էր նաեւ արտգործնախարար էրտարդ Նալբանդեանը, մտքեր էին փոխանակուել տարածաշրջանային անվտանգութեան խնդիրների, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման գործընթացի վերաբերեալ:

Նշենք, որ Երեւանից Թբիլիսի մեկնած Ջէյմս Սթայնբերգը նմանատիպ հանդիպում է ունեցել նաեւ տեղի քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների հետ:

Սթայնբերգը եւ նրան ուղեկցող ԱՄՆ պետքարտուղարի Եւրոպայի ու Եւրասիայի գծով պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Գորդոնը Երեւանում էին տարածաշրջանային այցի շրջանակներում:

Ամերիկացի բարձրաստիճանի դիւանագետներին ընդունել էր

**50 ՀԱՉԱՐ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ**

Մարտնակուած էջ 1-էն

Հանրահաւաքի ընթացքին ելոյթ ունեցան նաեւ Հայ Ազգային Գոնկրէսի այլ ներկայացուցիչներ:

Հանրահաւաքին միացան նաեւ «Ժառանգութիւն» կուսակցութեան ներկայացուցիչները, կուսակցութեան հիմնադիր եւ առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանի գլխավորութեամբ:

Այս անգամ եւս իշխանութիւնները փակած էին շրջաններէն դէպի Երեւան գացող ճանապարհները, ցուցարարներու թիւը սահմանափակելու նպատակով: Հակառակ այդ բոլորին, բազմամարդ էր հանրահաւաքը ու անոր յաջորդող երթը՝ Մաշտոցի պողոտայով դէպի Միասնիկեանի արձան, ուր ծաղկեպսակներ գետեղուեցան 2008-ի Մարտ 1-ի զոհերու յիշատակին:

Երթի ընթացքին հրմշտուք տեղի ունեցաւ ռատիկանութեան ու ցուցարարներուն միջեւ: Ռատիկանները շղթայ կազմած, երթի մասնակիցներէն կոպտօրէն կը պահանջէին քաղաքացիական պարտքի մէկ կողմով:

Հանջէին քաղաքացիական պարտքի մէկ կողմով:

Ազատութեան հրապարակի մօտէն անցնելու պահուն ռատիկանները խիտ շարքերով շրջափակած էին հրապարակը, չձգելով նոյնիսկ պատահական անցորդներու մուտքը:

Երթի մասնակիցները կը վանկարկէին «Պայքար, պայքար մինչեւ վերջ», «Ամօթ», «Հիմա» եւ այլ կոչեր:

Միասնիկեանի արձանի մօտ հասնելով վանկարկումներն ու կոչերը դադարեցան ու բոլորը լուռ երթով շարժեցան դէպի արձան: Հոն եւս հաւաքուած էին ռատիկաններ:

Երթի մասնակիցները մի քանի րոպէ լուռ, բռունցքները վեր պարզած կանգնեցան արձանի դիմաց, ինկարկեցին ու մոմեր վառեցին: Միասնիկեանի արձանի մօտ առաջին ծաղկեպսակները դրին Մարտի 1-ի զոհերու մայրերը:

Չոհերու յիշատակը լուռ յարգել է ետք, երթի մասնակիցները խումբ-խումբ հեռացան տարբեր ուղղութիւններով:

# ԺԱՆ ՕՂԱՍԱԲԵԱՆ ԳԼԽԱԴՈՐ ԲԱՆԱԽՕՍՆ ԷՐ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 6-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՅՈՒՇԱՐԱՆԴԵՍԻՆ

Շարունակում է 1-ին

Առուն-Ղազալ, Շէրիֆ Լի Պաքայի ներկայացուցիչ՝ հրամանատար Կէրի Նալպանտեան, իսլամ եւ քրիստոնեայ յարանուանութեանց, ինչպէս նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Քաթալիստներու, «Լիբանանեան Ուժերու» եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Լիբանանի, ԱՄՆ-ի, Գալիֆորնիոյ եւ «Մուսթաֆայալ»-ի դրօշներով զարդարուած բեմին երկու կողմերուն վրայ կը տեսնուէին նահատակ Ռաֆիք Հարիրիի եւ իր որդւոյն Սաստ Հարիրիի մեծադիր լուսանկարները:

ԱՄՆ-ի եւ Լիբանանի քայլերգներու ունկնդրութենէն ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուսթեմք յարգեցին նահատակ Ռաֆիք Հարիրիի յիշատակը:

Ռաֆիք Հարիրիի տեսլականին եւ Լիբանանի գերիշխանութեան պահպանման ու յառաջդիմութեան համար տարած անփոխարինելի ծառայութեանց համար դրուատական խօսքերով հանդէս եկան Լիբանանի հիւպատոսուհի Տիկ. Մատոնա Առուն-Ղազալ, դատաւոր Ճէյմս Գալտերօն, Շէրիֆ Լի Պաքայի ներկայացուցիչ հրամանատար Կէրի Նալպանտեան, «Լիբանանեան Ուժերու» ներկայացուցիչ Ճէմիլ Էլ Արապ, Քաթալիստ կուսակցութեան Լոս Անճելըսի ներկայացուցիչ՝ Ֆէտի Գուրդա, ՍԴՀԿ անունով Ընկ. Համբիկ Սարաֆեան եւ ապա գլխաւոր բանախօս՝ նախարար Ժան Օղասաբեան:

Բոլոր ելոյթ ունեցողները խստիւ դատապարտեցին «Մարտ 8-ի» ուժերու քայքայիչ ծրագիրն եւ Լիբանանը իրանի մէկ նահանգի վերածելու միտումները: Անոնք միաժամանակ պահանջեցին ապօրէն գէնքերու տարածման խափանումն ու Հարիրիի սպանութեան հարցով միջազգային ատեանի որոշումներու բացառապատման ու գործադրութիւնը:

## ԸՆԿ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԻ ԵԼՈՑԹԸ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կողմէ խօսք առնելով Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան ըսաւ.

«Վեց տարիներ առաջ, մութ ուժերու կողմէ Լիբանանի դէմ սանձազերծուած սարսափի ալիքին զոհը դարձան Վարչապետ Ռաֆիք Հարիրին եւ իր գործըն-

կերները: Արդարեւ, ահաբեկելով առաջնորդին, այդ ուժերը կ'ակնկալէին, որ սպաննած պիտի ըլլան նաեւ անոր՝ իրապէս ազատ, անկախ ու բարգաւաճ Լիբանանի մը տեսլականը: Սակայն, անոնք չհասկցան ու չըմբռնեցին, որ այդ տեսլականը, սոսկ անհատի մը չէր պատկանէր, այլ իւրաքանչիւր ազատատենչ Լիբանանցիի երազն էր:

Փորձեցին երազը սպաննել, փոխարէնը ստանալով Մայրինքու յեղափոխութիւնը:

Ճակատագրական է պահը այսօր Լիբանանի մէջ, ուր յստակ բաժանում կայ կողմերու միջեւ: Մէկը կը մերժէ արդարութիւնն ու երկրի անկախութիւնը ստորադասել, շինծու միասնականութեան ու անդորրութեան, իսկ միւսը ամէն ջանք կը գործադրէ ուրանալու արդարութիւնը եւ պատրաստ է ծառայելու իր օտար տէրերուն:

Այսօր, երբ ակնառես կ'ըլլանք թէ ինչպէս մէկը միւսի ետեւէն արաբական երկիրներու մէջ ժողովուրդը կը ծառանայ երկարամեայ բռնատիրութեան, ճնշումներու եւ կաշառակերութեան դէմ, կարելի չէ թոյլ տալ, որ արաբական աշխարհի ժողովրդավարութեան ջահը հանդիսացող Լիբանանը՝ դառնայ արբանեակ նահանգը կրօնապետութեան մը, որ նոյնքան բռնատէր ու յետադիմական է, որքան յաջորդաբար երկրագունդի երեսն վերացող այդ վարչակարգերը:

Ճշմարտութիւնն ու Արդարութիւնը ամէն բանէ վեր են եւ չեն կրնար ենթակայ ըլլալ քաղաքական շահարկումներու: Եթէ արդարութիւնը չչաղթանակէ, ապա անոնք, որոնք սպաննեցին Ռաֆիք Հարիրին, նոյն ընթացքով պիտի շարունակեն ու ի գուր հոսած պիտի ըլլայ հերոսներու արիւնը: Արդարութիւնը քննարկման ենթակայ չէ:

Արդարութիւնը չի կրնար արծարծուիլ կըր սեղաններու շուրջ, կամ փակ դռներու ետին: Արդարութեան բացառապատման միակ վայրը դատարանն է, ուր մեղադրեալը կատարեալ իրաւունքը ունի ինքզինք պաշտպանելու: Հետեւաբար, կը դատապարտենք Միջազգային դատարանը վարկաբեկելու ամէն մէկ փորձ որ կը միտի խափանելու ճշմարտութիւնը:

Առ այդ՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, Մարտ 14-ի համախմբման գինակիրներուն հետ միատեղ, կը շարունակէ պայքարիլ յանուն արդարութեան, առանց ընկրկելու, անվարան եւ այն յստակ համոզումով, որ պիտի գայ այն օրը, երբ Լիբանան կրկին պիտի յայտնուի ժողովրդավարութեան, ազատութեան եւ բարգաւաճման ուղիին վրայ:

## ԺԱՆ ՕՂԱՍԱԲԵԱՆԻ ԵԼՈՑԹԸ

Օրուան գլխաւոր բանախօսն էր Լիբանանի Խորհրդարանի անդամ եւ պետական նախարար՝ Ժան Օղասաբեան: Ան նախ իր ուրախութիւնը յայտնեց որ այս երկրորդ անգամն ըլլալով կը գտնուի Լոս Անճելըս, ոգեկոչելու մեծ նահատակի յիշատակը: Այնուհետեւ համապարփակ վերլուծականն ընելով շրջանի քաղաքական կացութեան Ժան Օղասաբեան յարեց. «Լիբանան անկախութեան խորհրդարանի շնորհիւ էր: Չհարցաւորութեան իրապէս կ'ըմբռնէր: Իսկ մենք կը մնանք



մեր ուխտին վրայ եւ նահանջ չենք ճանչնար...: Մեր երթը կը շարունակուի»:

## ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Նոյն օրը երեկոյան, նախարար Ժան Օղասաբեան այցելեց Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Փաստինայի կեդրոնը, ուր դիմաւորուեցաւ Կեդրոնական վարչութեան եւ Վարիչ Մարմինի անդամներուն կողմէ: Ներկայ էին նաեւ Կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող տարբեր միաւորներու ներկայացուցիչները:

«Հակառակորդներուն նպատակն է դիմափոխել Լիբանանը եւ գայն վերածել կղզիացած երկրի մը՝ այլ խօսքով նահանգային շրջանի մը»:

Խօսելով միջազգային ատեանի մասին յարգելի բանախօսը ըսաւ թէ ատիկա հանգրուան մըն է սահմանափակելու ոճիրները եւ շեշ-



տեց որ արդարութիւնը պէտք է յաղթանակէ:

Գալով բնակչութեան մէկ մասին առատօրէն գէնք ստանալուն՝ Օղասաբեանն ընդգծեց. «Չենք ուզեր ոչ մէկ գէնք ու գինամթերք, բացի՝ Լիբանանեան գէնքէն: Այլպէս ամէն ինչ ապօրինի կը նկատուի»:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Վազգէն Խոտանեան, յայտնելով թէ հպարտ ենք Լիբանանի քաղաքական թատերաբեմին վրայ նախարար Օղասաբեանի ունեցած կարեւոր դերակատարութեամբ:

Լիբանանի նոր դահլիճի կազմութեան խոչընդոտներուն մասին անդրադառնալով յարեց. «Ներկայիս կը պատրաստուի սեւ յեղափոխութիւն մը մութ ուժերու կողմէ արգելք հանդիսանալու նոր կառավարութեան կազմութեան ու դեմոկրատական ազատութեան»:

Իր պատասխան ելոյթին մէջ հայագրի նախարար անդրադարձաւ Հնչակեան Կուսակցութեան հետ իր ունեցած սերտ յարաբերութեան՝ օգուտ Լիբանանահայութեան եւ ամբողջ Լիբանանին:

«Կեղծ վկաներու թղթածրար»ի հարցին մասին իր տեսակետը յայտնելով ըսաւ թէ ատիկա կը նպատակադրէ վիժեցնել միջազգային ատեանի որոշումները:

Յայտնեց որ, Շաբաթ Փետրուարի 26-ին Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի պատուիրակութիւնը այցելած էր Պետական նախարար եւ Խորհրդարանի անդամ Ժան Օղասաբեանին:

Եզրափակելով իր ելոյթը Պր. Ժ. Օղասաբեան աւելցուց հետեւեալը «Վերադարձ Մարտ 14ի սկզբունքներուն եւ արմատներուն եւ դեմոկրատական կանոններուն»:

Սոյն հանդիպման ընթացքին յարգարժան նախարարը շահեկան տեղեկութիւններ տուաւ Լիբանանի եւ տարածաշրջանի քաղաքական յարափոփոխ իրավիճակի, Լիբանանի Դահլիճի կազմութեան դժուարութիւններուն եւ հայ գաղութի այժմու իրավիճակի մասին:

# ԱՐՑԱԽԻ ԽՆԴՐԻ «ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ» ՀԱՐՑ ԳՈՅՈՒԹԻՆ ՉՈՒՆԻ...

## ԵՐՈՒԱՆԴ ԽՈՍՐՈՎԵԱՆ

1988թ. Փետրուար ամիսը Արցախի պատմութեան մէջ եղաւ շրջադարձային: Արցախի ժողովուրդը յենուելով ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքի վրայ որոշեց ազատ եւ անկախ ապրել: Արցախի ժողովրդի ժողովրդավարութեան միջոցով ազատ կամքի արտայայտումն ու ինքնորոշման դրսեւորումը Ատրպէյճանի կողմից չստացաւ քաղաքակիրթ արձագանք: Ատրպէյճանը շարունակեց բռնապետական իշխանութիւնների կողմից վարուող եւ գործադրուող ապարդիւն քաղաքականութիւնը կրկնել, այն է՝ ժողովրդի եւ մարդու իրաւունքները բռնի միջոցով ճնշել:

Ատրպէյճանի իշխանութիւնները գործի դրեցին իրենց բոլոր ունակութիւններն ու տեխնոլոգիան՝ սաղմաւորելու միջոցով ստեղծել ազգամիջեան ընդհարումներ ու ողբերգութիւններ՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման ճանապարհը կանխելու համար: Ընդամէնը մէկ շաբաթ չտեւած՝ ամբողջ Ատրպէյճանով մէկ տարածուեց այն կեղծ տեղեկատուութիւնը, թէ հայերը յարձակուել են ատրպէյճանցիների վրայ՝ եւ Աղդամից հարիւրաւոր ատրպէյճանցիներ դիմել են փախուստի: Եւ պատահական չէր, որ այդ «փախստականները» Աղդամից փախուած էին ոչ թէ Պաքու, այլ Սոււմգայիթ: Սոււմգայիթում սկսուած է հայերի դէմ բարբարոսական, ամենամարդկային դաժան սպանութիւնների եռօրեայ կազմակերպուած մի անպատկերացնելի ոճրագործութիւն:

Ըստ պաշտօնական տուեալների՝ դաժանօրէն սպանուեցին 33 մարդ, համաձայն տարբեր աղբիւրների ու հետազոտութիւնների՝ աւելի քան հարիւր: Մինչ օրս դեռ պարզ չի դարձել սպանուածների ճշգրիտ թիւը: Եռօրեայ այդ բարբարոսական յարձակումների ընթացքում, երբ դաժանաբար սպանուած էին անմեղ քաղաքացիներ, ոչ ոստիկանութիւնը, ոչ անվտանգութեան ծառայութիւնը եւ ոչ էլ Պաքուի իշխանութիւնները չմիջամտեցին՝ ոճրագործութիւնը կանխելու համար, իսկ Մոսկուան ինչպէս միշտ «ուշացաւ»:

Քանի որ Սոււմգայիթի ջարդով չկարողացան Արցախի ժողովրդին իր ազատ ապրելու որոշումից շեղել, նախաձեռնեցին աւելի մեծ, աւելի բարբարոսական սաղ-

մանք ու դաւադրութիւն՝ յարձակուելով ամբողջ ատրպէյճանահայութեան վրայ ու դաժանաբար սպանելով, մորթելով ու նրանց տները, ունեցուածքը վառելով ու փլելով, բռնի փախուստի ենթարկելով՝ մաքրել հայերին Ատրպէյճանի ամբողջ տարածքից, ինչպէս արեցին երիտթուրքերը 1915 թուին:

Ատրպէյճանի կողմից սանձազերծուած, Արցախին պարտադրուած պատերազմը տասնեակ հազարաւոր կեանքեր խլեց երկու կողմերից, որի համար էլ պէտք է նրան պատասխանատուութեան ենթարկել: Ատրպէյճանը պէտք է հատուցի թէ՛ պատերազմի միջոցով հասցուած վնասը, թէ՛ գոհերի հարազատներին ու ժառանգներին, եւ թէ՛ ամբողջ փախստականներին:

Իսկ ի՞նչ է արել տարիների ընթացքում ՀՀ-ը Սոււմգայիթի յանցագործութիւնների բացառապատման, դատապարտման, իսկական յանցագործներին պատասխանատուութեան ենթարկելու գործում, համարեա ոչինչ:

Հայաստանի ղեկավարութիւնը Արցախի խնդրի շուրջ բանակցութիւններում ոչ թէ միայն Սոււմգայիթն է մոռացել, այլ նաեւ աղբբեջանի տարածքով մէկ հայերի ջարդն ու հարիւր հազարաւոր փախստականների խնդիրը:

Հայաստանը բանակցում է Ատրպէյճանի կողմից պարտադրուած, «Մատրիտեան սկզբունքներում» տեղ գտած նախապայմանների շուրջ, այն է՝ ձանաչել Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, եօթ շրջանների վերադարձը, Արցախից ու շրջակայ տարածքներից Ատրպէյճանցի փախստականների վերադարձը, ու ամենավերջում՝ Արցախին «միջանկեալ» կարգավիճակի տրամադրումը (այլ բան չի, ինչ Ատրպէյճանի կողմից առաջարկող «լայն ինքնավարութեան» տրամադրում), իսկ երբ որ Արցախում Ատրպէյճանցիների թիւը կը հասնի արդէն որոշիչ քանակի՝ Արցախի ճակատագրի որոշումը (ինքնորոշումը) կը դրուի ժողովրդի բուհարկութեան:

Մինչդեռ Հայաստանը պէտք է «Մատրիտեան սկզբունքների», այսինքն Ատրպէյճանի կողմից թելադրուած վերոյիշեալ նախապայմանների ճիշտ հակառակ հերթականութեամբ շարժուի:

Հայկական կողմը կատարուած

փաստը, այսինքն Սոււմգայիթի ջարդը մոռացութեան է մատնուած, կամ դրա մասին լուր է, իսկ Ատրպէյճանը «խոջալուի դէպքերը» ներկայացնում է որպէս «ցեղասպանութիւն»:

Սոււմգայիթում, Ատրպէյճանի ամբողջ տարածքում հայերի հանդէպ կատարուած յանցագործութիւնները, նրանց բռնազաղթումը, Արցախի վրայ սանձազերծուած յարձակումը իրար հետ շողկապուած են: Բանակցութիւններում դրանց դուրս թողնելը կամ զլիւկվայք քննարկումը, նախ դիւանագիտական սոփոտութիւն է, իսկ երկրորդը, եւ ամենակարեւորը, անմեղ գոհերի, հարիւր հազարաւոր փախստականների կեանքն ու ապրուստը անտեսելու, անարժան համարելու վկայութիւնն է:

Անընդհատ խօսուած է այն մասին, թէ հայկական կողմը բանակցութիւններում խօսում է հիմնախնդիրների, այսինքն կոնֆլիկտի դրդապատճառների մասին, ոչ թէ հետեւանքների մասին, որպէսզի դրանց արմատական լուծում տայ, բայց փաստ է, որ բանակցութիւնների սեղանին, բանակցուող փաստաթղթերում միայն Ատրպէյճանի նախապայմաններ են քննարկուած, այսինքն բանակցութիւնները վարուած են հետեւանքների շուրջ:

Տարին մէկ անգամ յիշելով Սոււմգայիթի ջարդի մասին, ի միջի այլոց չմոռանալով նաեւ փախստականներին յիշել, Փետրուարի 88-ի առթիւ ամպագոտու յայտարարութիւններ անել, միւս օրը դրանք բոլորը մոռանալ, եւ նորից բանակցութիւնների, հանդիպումների գնալ, ո՛չ թէ խօսելու վերոյիշեալ խնդիրների մասին, այլ «ԼՂՀ խնդրի կարգաւորման» մասին:

Արցախի խնդրի «կարգաւորման» հարց գոյութիւն չունի: Արցախի «խնդրի կարգաւորում» ասելով կասկածի տակ է դրուած ինքնորոշուած եւ իրեն անկախ հռչակած Արցախի Հանրապետութիւնը: Արցախը ունի մէկ խնդիր, եւ դա իր անվտանգութեան խնդիրն է: Գուցութիւն ունի Սոււմգայիթում եւ այլուր հայերի հանդէպ կատարուած յանցագործութիւնների կազմակերպիչներին պատասխանատուութեան կանչելու հարց, գոհուածների հարազատներին ու ժառանգներին եւ փախստականներին հատուցելու հարց: Իսկ Արցախի Հանրապետութեան ճանաչելու, կամ չճանաչելու խնդիրը, ընդհանրապէս չպէտք է դառնայ բանակ-

ցութիւնների թեմա, քանի որ դա արդէն կատարուած փաստ է եւ անվերադարձնելի իրողութիւն:

Պէտք է հաշուարկուի փախստականների ունեցուածքի, կորստի ամբողջական չափը, հատուցման ձեւն ու ժամկէտը, պատրաստուի Սոււմգայիթում եւ այլուր գոհուածների ու տուժած ընտանիքներին փոխհատուցման ամբողջ փաթեթը:

Արցախը, որի անվտանգութեանը սպառնում է Ատրպէյճանը, պէտք է մասնակցի բանակցութիւններին՝ խաղաղ ճանապարհով տարածքային հարցերի շուրջ բանավէճերի լուծման, Ատրպէյճանի կողմից սանձազերծուած պատերազմի, եւ Արցախի շրջափակման հետեւանքով Արցախին ու նրա ժողովրդին հասցուած վնասների հատուցման պահանջարկ դնելու եւ այդ խնդիրները լուծելու համար:

Քանի որ բռնազաղթուածները Հայաստանում են ապաստան գտել եւ այդ պատճառով Հայաստանն է տուժուել, ապա Հայաստանը պէտք է ներկայացնի փոխհատուցման պահանջ՝

1. Իր կողմից կրած վնասների,
2. Սոււմգայիթում եւ այլուր գոհուածների հարազատների եւ ժառանգներին,
3. Փախստականներից բռնազրուած, կամ թողած ունեցուածքի,
4. Պատերազմի պատճառով Հայաստանին հասցուած վնասների հատուցման համար:

### Ամփոփում.


Քանի որ Սոււմգայիթի եւ Ատրպէյճանի տարածքում հայերի ջարդը, Ատրպէյճանից հայերի բռնազաղթն ու Արցախի ժողովրդի վրայ սանձազերծուած պատերազմը ուղղակի կապ ունեն Արցախի ինքնորոշման խնդրի հետ, պէտք է վերադառնալ 88 թուի սկիզբը եւ բանակցութիւնների անմիջական կողմ դարձնել Արցախին, բանակցութիւնների սեղանին դնել Սոււմգայիթի ջարդի պատասխանատուութիւնը, գոհուածների ընտանիքների եւ փախստականների փոխհատուցման խնդիրը, սանձազերծուած պատերազմի միջոցով Արցախին եւ Հայաստանին հասցուած վնասի փոխհատուցումը:

Չեք մնալ Արցախի ինքնորոշման թեմայի շուրջ բանակցելուց, այդ խնդիրը համարել կատարուած փաստ, փակուած թեմա եւ այդ իրողութեան ընդունումը դարձնել բանակցութիւնների շարունակման առաջին նախապայմանը:

[massisweekly.com](http://massisweekly.com)


**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
*More locations and more ways to service your insurance and financial needs*


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---





**A.B.A. INSURANCE SERVICES**


**Insurance coverage can help you financially!**  
**Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է**


*Coverage & Protection should be on the top of your priority list.*

















**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՄԱՐԱՇԻ ԱՂԵՏԻ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒՆ 91-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Խ.Ծ. «Մարաշի Յայրենակցական Միութեան» Գալիֆորնիոյ մասնաճիւղի նախագահութեամբ կազմակերպուած էր Մարաշի արդէտի մահատակներուն 91-րդ տարելիցին նուիրուած հոգեճաշ-հանդիսութիւն մը, որ տեղի ունեցաւ համանուն միութեան «Ասատուրեան» գեղակերտ սրահին մէջ, Կիրակի 27 Փետրուար 2011-ին, Փասատիմա, Լոս Անճելըս: Գալիֆորնիոյ գաղութներու, նոյն Կիրակիին, տեղի ունեցող զիրար խաչածեղ խնդրուած ձեռնարկներուն Ասատուրեան սրահը լեցուած էր մարաշցի կամ ոչ մեծ թիւով հանդիսատեսներով, որոնք եկած էին իրենց յարգանքի տուրքը վճարելու Մարաշի Աղէտի զոհերուն: Օրուան բանախօս հրաւիրուած էր «Մասիս» գլխաւոր խմբագիր Տօթթ. Արշակ Գազանճեան: Ստորեւ՝ հատուածներ իր ելոյթէն:

**Միւրեւի հարազատներ,**  
Շնորհակալութիւն այսօրուայ հանդիսութեան՝ ինծի տրուած խօսքի բաժնի համար, որ առիթ կ'ընծայէ ինծի, այսօրուան իմ մտորումներու առանցքը դարձնել Մարաշի Աղէտին ինկած անմահանուն մարտիրոսները, որոնք գոհուեցան հայու կեանքի, ինչքի, ազգային ժառանգութիւններու պահպանման՝ մեր դարաւոր երազներու նուիրաւոր ծման ճանապարհին: Անոնք ինկան, որպէսզի ապրի՝ Մարաշը, ապրի՝ մարաշցին, ապրի՝ հայր, ապրի՝ Արցախն ու Հայաստան, դառնան անկախ ու բարգաւաճ:

Այստեղ, այս սրահէն ներս գտնուող, կամ այլուր՝ աշխարհով մէջ սփռուած ամէն մէկ մարաշցի, նոյն մտածումներով, միեւնոյն դառնութեամբ, խորը ընդվզումով, նաեւ, պերճախօս պահանջատիրութեամբ կը խոնարհի Մարաշի աղէտին ինկած գոհերուն ինկելի յիշատակին առջեւ, անոնց նահատակութեան 91-րդ տարելիցի առիթով: Ան, երկիւղածութեամբ կ'ոգեկոչէ անոնց յիշատակը, նաեւ կը վերանորոգէ իր ուխտը, կրկնակի մարտիրոսացած եւ կրկնակի յարուստիւն առած, բայց միշտ կենդանի՝ հերոսական Մարաշի արիասիրտ նահատակներու առջեւ, որոնք մահը դիմաւորեցին «Վասն հաւատքի, ազգի եւ հայրենեաց»:

Համառօտ ակնարկ մը բաւարար պիտի ըլլար վկայակոչելու համար հոովմէական, բիւզանդական եւ արաբական տիրապետութիւններէն սկսեալ մինչեւ 16-րդ դար, երբ Մարաշ, իր 70 հազար հաշուող հայ, թուրք, յոյն եւ արաբ ազգաբնակչութեամբ, որուն 40 հազարը հայ՝ կ'անցնի Օսմանեան թուրքերու տիրապետութեան ներքեւ:

Մեծ է եղած Մարաշ քաղաքի ազգային, հայրենասիրական, կրթական, ազատագրական եւ քաղաքական կարեւորութիւնը: Այս իրողութիւնը արձանագրեցինք, թող որ շատ հպանցիկ կերպով, պարզապէս կարենալ ցոյց տալու համար անոր դէմ Ա. Աշխարհամարտէն պարտեալ դուրս եկած օսմանեան կայսրութեան ժառանգորդ Քեմալական Ազգայնական Շարժումի իրագործած 1920թ. Մարաշի Աղէտի ահաւորութիւնը,

Մեծ է եղած Մարաշի պատմական անցեալը: Անոր ծաւալած հոգեւոր, կրթական, հրապարակագրական, ազգային ու հասարակական գործունէութեամբ, իր կանգնած Լուսաւորչական 6, Կաթողիկէ 1 եւ Աւետարանչական 4 եկեղեցիներով: Մեծ է եղած անոր ծաւալած կրթական կեանքը՝ իր հաստատած բազմաթիւ վարժարաններով, որոնց մէջ իրենց կարեւորութեամբ ակնբախ եղած են «Ազգային Կեդրոնական»ը, «Ճեմարան»ը, որոնք հիմնադրուած են դեռեւս 1891-ին: Այլապէս ուշադրութիւն գրաւած է այն պատմական փաստը, որ Հիւսիսային Ամերիկայի Մասաչու-

սեթ նահանգի Պոսթոն քաղաքի մէջ կազմուած է Մարաշի հայրենակցական Միութիւնը 19-րդ դարու կէսերուն, հիմնական ծրագիր ունենալով նիւթապէս օժանդակել իր վարժարաններուն եւ «Մարաշի Հայ եւ Բողոքական Միացեալ Ազգային Վարժարանին»: Մարաշ, նաեւ, մեծ է եղած իր մշակութային գործունէութեամբ, երիտասարդական-մարզական շարժումներով, լրագրական բաժիններով եւ նպատամատուց ընկերակցութիւններով, եւ իր լոյս ընծայած «Ճմարտութիւն» եւ «Կոչնակ» պարբերականներով: Ըլլալով կաթողիկոսանիստ քաղաք, իր հոգեւոր հանգամանքին բերումով, ծաւալած է ազգային լայն առաքելութիւն, որով պիտի գար հովուապետելու ազգիս, հոգե-մտաւոր, կրթա-մշակութային եւ նաեւ աճող սերունդներու զարգացման կարիքները:

**Հարազատներ,**  
Ինչպէս պատմական անցեալին, նաեւ վերջին դարուս, դառն են եղած Մարաշի դիմագրաւած հաւաքական կեանքի փորձառութիւնը:

Մարաշ, իր ունեցած 1920-ի ճակատագրական աղէտէն քանի մը տարի առաջ, 1915-ին, արդէն իսկ ապրած էր հայ ազգի դէմ օսմանեան կայսրութեան կողմէ գործադրուած Յեղասպանութեան ահաւորութիւնը, որ բովանդակ արեւմտահայ ազգաբնակչութեան արժած էր աւելի քան մէկ ու միլիոն նահատակութիւն, մշակութային հսկայական կորուստ, եւ իր պատմական հողերուն բռնագրաւում: Մարաշցին, բոլորին պէս, իր կարգին տեսաւ տեղահանութիւն, բռնագրաւում, աւեր ու ավար, Տէր Զօրի շնչահեղձ տապ ու քաղց ու սպանդ:

Ըսինք, օսմանեան Երիտ. Թուրքերու կողմէ հայոց դէմ իրագործուած Յեղասպանութիւնը, Մարաշին պարտադրուած առաջին աղէտն էր: Այս ազգակործան Յեղասպանութիւնը, մեր ազգային մտածողութեան մէջ արտայայտութիւն կը գտնէ Յեղասպանութեան ճանաչումի, Դատապարտումի եւ Հատուցումի՝ անժամանցելի, հետեւողական եւ հաւաքական պահանջատիրութեամբ, որ, անտարակոյս, իր արդար լուծումը պիտի գտնէ ուշ կամ կանուխ, ինչ ալ ըլլան անոր ճամբուն բարձրացող արգելքները: Ինչ ալ ըլլան մեր ականջին հասած սպառնալիքները: Ինչ ալ ըլլան միջազգային դիւանագիտական պարագայական կապերն ու հետապնդուած միջ-պետական գժուճ շահերը, որոնք մինչեւ օրս կը շարունակուին, հարցականի տակ դնել մեր ազատագրուած պատմական Արցախի անկախ գոյութիւնը, նաեւ սպառնալիքի տակ պահելով Հայաստան աշխարհի ապահովութիւնը...

Տարաբախտ պայմաններու բերումով, ինչպէս կը պատահի երկ-

րաշարժային ցնցումին չաջորդող վերահաս երկրորդական շարժերու պարագային՝ հերոսական Մարաշ ապրեցաւ իր երկրորդ մահացու աղէտը, որ պատճառ դարձաւ անոր վերջնական անկումին:

Մարաշի Աղէտին ինկած հերոս մարտիկներուն նահատակութեան 91-րդ տարելիցի ոգեկոչումը այս հանդիսաւոր պահուն՝ կը բացայայտէ մարաշցիին դէմ ծրագրուած երկրորդ Յեղասպանութիւն մը, որ դաւադրաբար, ընդլատակեալ նիւթուած եւ քաջալերուած էր հայուն, այսպէս կոչուած դաշնակից պետութիւններ Ֆրանսայի եւ Անգլիոյ միջեւ գաղտնաբար կնքուած համաձայնութեամբ, իր գրաւման տակ գտնուող Կիլիկիան՝ Անգլիա կը յանձնէր Ֆրանսայի, որ յանձնառութիւն վերցուցած էր Կիլիկիոյ հայ ազգաբնակչութիւնը իր հոգատարութեան տակ պահելու եւ գորակցել անոր անկախացման գործընթացին:

Ամէն դէպքին, հայուն՝ այսպէս կոչուած դաշնակից Ֆրանսա՝ դաւադրաբար պիտի յանձնէր Կիլիկիոյ շարքին նաեւ Մարաշը՝ թուրքիոյ:

Ֆրանսա քաջալերեց գայն, անոր տրամադրելով գինամթերք, թուրք ոստիկանութիւն, բարձրաստիճան թուրք սպաներ, որոնց շարքին՝ բանտերէն արձակած ոճրագործներ՝ ձախողութեան մատնելու համար Կիլիկիոյ հայ ազգաբնակչութեան անկախութեան ձեռքբերումը: Ազգային քաղաքական կուսակցութիւններու, յարանուանութիւններու, եւ այլ կառույցներու միասնական խոյանքը: Ֆրանսա աշխատեցաւ հեզասահ դարձնել Մարաշէն քանի մը ժամ հեռաւորութեան վրայ, ընդհանուր յարձակման ժամկէտին սպասող Քարապէքի յառաջխաղաքը, իր լրումին հասցնելու համար հայերու վերջ-

նական ջարդը տարածաշրջանէն ներս:

Ֆրանսա գերադասեց իր քաղաքական եւ տնտեսական շահերը: Մարաշ իր ապրած աղէտին զուգահեռ՝ ապրեցաւ դաւադրական գործընթացի մը առթած դառն փորձառութիւնը, որ վշտահարեց ոչ միայն մարաշցին, այլ համընդհանուր հայութիւնը:

Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն ետք, Միջակ Դասակարգը Եւրոպայի եւ Ամերիկայի դրամատէր երկիրներու ժողովուրդներուն մէջ ճանչցուեցաւ որպէս մեծագոյն տոկոս ներկայացնող դասակարգ:

Շնորհիւ յառաջադէմ այդ երկիրներու ժողովրդավարական վարչական կարգուսարքերուն, միջակ դասակարգը դանդաղ բայց հաստատ քայլերով ձեռք ձգեց աննախընթաց ընկերային ապահովութիւն շնորհող իրաւունքներ, ինչպիսիք են գործի ապահովութիւն, գործէ արձակման պարագային նիւթական հատուցում (Indemnity), տարեկան արձակուրդ, թոշակի վճարում (Social Security), եւ այլն:

Արեւմուտքի դրամատիրութիւնը, կարծէք կանխելու համար օրից օր տակաւ զօրացող ընկերավարականներու ընթացքը, կամօրէն ընդունած էր ընկերային ծառայութիւններ ընծայել իր ազդեցութեան տակ ապրող ժողովուրդներուն:

Սովետական Միութիւնը վախազուրկ վիճակ ստեղծելով ազատ աշխարհին, անուղղակի ձեւով օգտակար դարձած էր «Երկաթէ վարագոյրէն» դուրս ապրող ժողովուրդներուն:

Ահա թէ ինչու, Սովետական

Միութեան փլուզումէն ետք (1991), միջակ դասակարգի ստացած ընկերային իրաւունքները կամաց-կամաց սկսած են առնուել իրմէ, եւ դրամատիրութիւնը, կոխկրտելով աջ ու ձախ, ստեղծած է իրավիճակ մը, որ կ'անտեսէ գործաւորներու եւ պաշտօնեաներու արդար իրաւունքները, գործէ կ'արձակէ անոնցմէ յառաջացած տարիքի մէջ եղողները թոշակի իրաւունքէն զրկելու համար գիրենք, եւ մնացեալներուն ալ, երկու կամ երեք հոգիի գործը մէկ հոգիի վրայ դնելու պարտաւորութիւններով կը բեռնաւորէ:

Այս բոլորը կ'ըլլան հարուստը աւելի հարստացնելով եւ միջակ դասակարգը աղքատացնելով կամ պարտքերու տակ գայն շնչահեղձ ընելով:

Դրամատիրութեան ծառայող կամ ընկերակից վերջերս տապալած Արաբ բռնատէրեր, տեսանք թէ ինչպէս իրենց անօթի ժողովուրդի կոկորդէն կտրած միլիարներ դիզած են հոս ու հոն: Անգործութեամբ աղքատացած կամ թշուառ դարձած միջակ դասակարգէն ծնած երիտասարդութիւն մը, նորօրեայ յեղափոխութիւններով տապալեց նորօրեայ բռնատէրեր Արաբական աշխարհի մէջ:

Ամերիկայի միջակ դասակարգը, երկու տարի առաջ, Պարաբ Օպաման նախագահ ընտրելով յաջողուց ճերմակ յեղափոխութիւն մը: Սակայն, ափսոս, որ Օպամայի իշխանութեան սկզբնաշրջանին սնանկացած դրամատէր հաստատութիւններ, վերականգնելով միջակ դասակարգի կողմէ հաւաքուած ու դիզուած պետական գանձով, տակաւին խեղդել կ'ուզեն միջակ դասակարգը:

Դրամատիրութիւնը, այժմ վերաշխուժացած պայքար կը մղէ միջակ դասակարգի դէմ, եւ հակա-բանտորական ու հակա-սենտիքայական ընթացքը սկսած անցեալ դարու ութսունական թուականներուն, նորընտիր Հանրապետական Նահանգապետերու կողմէ աշխուժօրէն կը կիրարկուի ներկայիս Ամերիկայի մէջ, ինչպէս Ուիսքոնսին (Wisconsin), Օհայո-ի (Ohio) եւ տարբեր նահանգներու մէջ:

Եւրոպայի մէջ ալ, Ամերիկայի Globalization-ի քաղաքականութեան զոհ գացած գործաւոր միջակ դասակարգը կեանքի մակարդակի անկում ճանչցած է, եւ հոն ալ սկսած է աղքատանալ:

Միջակ Դասակարգի իրաւունքները տակաւ առ տակաւ կը պակսին:

Միջակ դասակարգը պէտք է պայքարի եւ չկորսնցնէ արիւնով ու քրտինքով ձեռք բերած իր մէկ դարեայ իրաւունքները:

### ՋԻՆ ՇԱՐՓ.

#### «ԵՐԲ ՄԱՐԴԻԿ ԱՅԼԵԻՍ ԶԵՆ ՎԱԽԵՆՈՒՄ, ԲՈՆԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ Է»

#### ՏԱԹԵԻԿ ԼԱՋԱՐԵԱՆ

Թերեւս քչերը գիտեն, թէ ով է արաբական աշխարհում շարունակուող յեղափոխութիւնների ալիքի ոգեշնչողը: 83-ամեայ Ջին Շարփը ապրում է Պոսթոնում իր փոքր տանը, զբաղուած է գիտական գործունէութեամբ:


Նրա աշխատութիւնները՝ «Բռնապետութիւնից դէպի ժողովրդավարութիւն», «Ոչ բռնի գործողութիւնների 198 մեթոդ», որ պատմում են խաղաղ յեղափոխութիւնների անցկացման մասին, ոգեշնչել են այլախոհների բազմաթիւ երկրներում, ինչպէս՝ Բիրման, Պոսնիան, Էստոնիան, այժմ էլ՝ Թունիսն ու Եգիպտոսը:

«Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցը հարցազրոյց է վերցրել Ջին Շարփից:

Հարցին, թէ ի՞նչ է զգում, երբ տեսնում է, որ բոլոր այս երկրները Մերձավոր Արեւելքում ժողովրդավարութեան համելու իրենց ճանապարհին օգտագործում են իր ուսմունքը, Ջին Շարփը պատասխանել է. - «Ես չեմ ասի, թէ դա իմ ուսմունքն է, ես այլ բառ կ'օգտագործեմ՝ իմ ուսումնասիրութիւնները՝ հիմնուած հետազոտութիւնների վրայ: Շատ լաւ է, որ իմ աշխատանքներն օգտակար են, սակայն եգիպտական յեղափոխութիւնը Եգիպտոսի ժողովրդի արժանիքն է, ոչ իմը»:

«Ինչպէ՞ս կը բնորոշէիք այս յեղափոխութիւնը», - լրագրողի այս հարցին նա արձագանքել է. - «Դա շատ համարձակ է, նրանք ցոյց տուեցին իրենց համարձակութիւնը, այս օրերի ընթացքում մարդիկ կորցրեցին իրենց վախը, եւ այս վախից ազատուելը այն է, ինչի մասին մշտապէս նշել է Գանդին իր տեսութեան մէջ»:

«Երբ մարդիկ այլեւս չեն վախենում, բռնապետութիւնը մեծ վտանգի մէջ է», - ընդգծել է Ջին Շարփը՝ կարեւորելով ոչ բռնի պայքարի ձեւը եւ համարելով, որ պայքարի խաղաղ եղանակն է արդիւնաւէտ:



Նա ասել է, որ Եգիպտոսում եւս մարդիկ մինչեւ վերջ տարան իրենց խաղաղ պայքարը, եւ դա զարմանալի նուաճում է, որն էլ նրանց յաջողութեան բանալին է հանդիսացել:

Եգիպտոսի ապագայի մասին հարցին, թէ իր կարծիքով՝ դէպի ո՞ւր կը շարժուի այդ երկիրը, Շարփը պատասխանել է. - «Ես յուս ունեմ, որ նրանք կը պահպանեն ժողովրդավարութիւնը, կարծես չկայ որեւէ նոր խումբ, որ այս անցումային շրջանում ղեկավարութիւնը ստանձնի եւ նոր բռնապետութիւն հիմնի, ինչը չէր բացառում»:

Տարածուած կարծիք կայ, որ Եգիպտոսի եւ Թունիսի յեղափոխութիւններում իրենց ազդեցութիւնն ունեցան ինտերնետն ու սոցիալական ցանցերը, որոնք ապահովեցին միասնական հարթակ մարդկանց համար՝ համակարգելու իրենց զաղափարներն ու գործողութիւնները:

Ջին Շարփը հեռու է ինտերնետից, նա չունի Facebook-ի սեփական էջ, իսկ էլեկտրոնային փոստից օգտուում է միայն խիստ անհրաժեշտութեան դէպքում, սակայն կարծում է, որ հաղորդակցման նոր միջոցները կարեւոր դեր ունեն:

«Կարծում եմ՝ անժխտելի է, որ շատ կարեւոր է մարդկանց մօտեցնելը միմեանց հետ հաղորդակցուելու համար», - նշել է նա:

**ՄԱՍԻՍ** **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----


Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----


Country: -----

Tel :----- Fax : -----

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու ձայնափոսքերի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, բազային եւ մկանային ցտեղի:  
Ինքնաշարժի վթարի ետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

**ՄԵԾ ՊԱՅՈՑ ՍԵՄԻՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒ ԱԻԵՏԻՍԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՅՍ ԳԵՐԵՉՄԱՆԷՆ**  
**Ս. Զատիկ, Ապրիլ 24, 2011**

**ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ.**  
**ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

«Գովեա Երուսաղէմ գՏէր»  
 «Ի վերիմ Երուսաղէմ»

Զատիկի օրուան հոգեհանգիստը չէ որ պիտի մշտ Ապրիլ 24-ը, այլ Յարութեան տօնն է որ գերազանցօրէն պիտի ընդգրկէ իր մէջ Մեծ Եղեռնի «Ի վերիմ Երուսաղէմ»ը

Սրտառուչ այս երկու շարականներու ընդմէջէն Երուսաղէմ Սուրբ Քաղաքը բացառապէս կը կրկնուի այս տարի Ս. Յարութեան Կիրակին՝ Ապրիլի 24-ին, ո՛չ անկախաբար իրարմէ, այլ յարակցաբար իրարու: Չկայ աւելի բարձր վկայութիւն հայ ազգին համար քան այն որ ներկայ տարին Հայ Եկեղեցին եւ Քրիստոնեայ բովանդակ աշխարհը կ'առաջնորդուին Ս. Զատիկի յաղթական երթը գովերգելու մասնաշատուկ եւ պատմական երկու հեռուոր հանգրուաններու գուգաղիպութեամբ: Ապրիլ 24, Տօն Յարութեան եւ միեւնոյն ատեն Յիշատակ Ապրիլեան Նահատակաց:

Լոյս Գերեզմանէն դէպի անշիրիմ գերեզմաններ, «ո՛չ երազ եւ ո՛չ յարթութեան տեսիլ», այլ հայոց Մեծ Եղեռնի լուռ վկայութիւն որ այս տարի յաղթանակը պիտի երգէ միանգամայն Տիրոջ Յարութեան եւ Հայ Ազգի վերջապահութիւն: Գերազանց գուգաղիպութիւն, ո՛չ միայն գուգահեռ, այլ մանաւանդ գիրար ամբողջացնող, ո՛չ այլեւս տրամութեան եւ սուգի, այլ յարութեան եւ յոյսի, ո՛չ խաւարի եւ անարդարութեան, այլ լոյսի եւ ճշմարտութեան, ո՛չ մահուան այլ կեանքի: Վկայ՝ անցնող հարիւրամեակը:

Ինչպէս ամէն տարի Ս. Զատիկին, այս տարի եւս քաղցր ձայնով պիտի երգենք «Գովեա Երուսաղէմ գՏէր» յաղթերգը, այս անգամ ո՛չ միայն որպէս յուշ Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Յարութեան, այլ որպէս վկայութիւն անոր՝ հայ միլիոնաւոր նահատակներու լուռ կանչով՝ նոյնիսկ եթէ առանց »Ի վերիմ Երուսաղէմ« ըր գրելու: Նախախնամական գուգաղիպութիւն մըն է այս, շնորհաբեր, յուսատու, բացառիկ օրհնութեամբ գերուի եւ աստուածային ճշմարտախոյզ կնիքով դրոշմուած: Եթէ նոյնիսկ չերգենք «Ի վերիմ Երուսաղէմ»ը Զատիկի այս Կիրակի օրը, լուրեանք եւ լիբրալ երգած կ'ըլլանք գայն «Գովեա Երուսաղէմ»ը երգելով, որովհետեւ առաջինը հետեւութիւնն է երկրորդին, քանզի Քրիստոս յարեալ ի մեռելոց եւ հայկազունք մարտիրոսութեամբ «մահուամբ գմահ կոխեցին»:

Անշուշտ հարց պիտի ծագի մեր մտքին մէջ առ այն թէ ինչպէ՛ս տօնել Քրիստոսի Ս. Յարութեան մեծագոյն տօնը, եւ նոյն օր յիշատակել նաեւ մեր նահատակները հոգեհանգիստը չզլանալով անոնց արդար հոգիներուն: Չբաժնել երկուքը իրարմէ՛ Տիրոջ տնօրինումն է եւ մեզի տրուած աստուածային շնորհը: Երգել Ս. Յարութեան շարականները ինքնին երգել պիտի նշանակէ նաեւ հոգիներուն հան-

գիստը, համաձայն Քրիստոսի խոստումին թէ իր Յարութեամբ «մեզ զկենսա պարգեւեաց»:

Յաղթանակի վերածուած խաչելութիւնն է գոր Հայ Եկեղեցին պիտի կատարէ այս տարուան Ապրիլի 24-ին ի լուր քրիստոնեայ աշխարհին: Հնօրեայ Հայ Եկեղեցիներու զանգերը յաղթական պիտի ղօղանջեն, ինչպէս միշտ, Յարութեան աւետիսը սփռելով, եւ նորօրեայ խոնարհած եւ վերընծիւղած բազմացրիւ հայ եկեղեցիները ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս, ի նորոյ պիտի միախառնեն հայ նահատակաց մերձ հարիւրամեայ լուռ վկայութիւնը «Յարուցեալ գՔրիստոսն օրհնելով»:

Հարկ չկայ սոցն կրկնակի պարգեւը ինդրոյ առարկայ դարձնելու թէ ինչպէս կարելի պիտի ըլլայ Ս. Զատիկի Կիրակին տօնել առանց հոգեհանգիստի՝ մեր նահատակներուն համար: Արդեօք օր մը կամ շաբաթ մը յետաձգել նահատակաց յիշատակը, նկատի ունենալով Ս. Յարութեան անբողոքաբան առաջնահերթութիւնը: Անշուշտ կարելի է եւ թոյլատրելի, մանաւանդ Զատիկի յաջորդ օրը երբ Մեռելոց է արդէն: Սակայն չմոռնանք որ երկուքը գուգահեռ՝ յաղթական դուրս եկած են, այս անգամ բաղդատելիօրէն գուգորդուած իրարու:

Ապրիլ 24, 2011 պիտի ըլլայ ա՛յն բացառիկ Կիրակին երբ բոլոր պիտի գանք խոնարհելու Ս. Յարութեան եւ Հայ Ազգի վերջապահութիւնը: Գերազանց գուգաղիպութիւն, ո՛չ միայն գուգահեռ, այլ մանաւանդ գիրար ամբողջացնող, ո՛չ այլեւս տրամութեան եւ սուգի, այլ յարութեան եւ յոյսի, ո՛չ խաւարի եւ անարդարութեան, այլ լոյսի եւ ճշմարտութեան, ո՛չ մահուան այլ կեանքի: Վկայ՝ անցնող հարիւրամեակը:

Որբանոցներ պատուաւոր վարժարաններու վերածուեցան, հայ խլեակներու որդիք հպարտ բարձրացան որպէս գիտնականներ ու մասնագէտներ, Արմաշի Դպրեվանքի նահատակ հոգեւորականներ փոխարինուեցան Մայր Աթոռի, Երուսաղէմի եւ Տանն Կիլիկիոյ շնորհալի հոգեւորականներով, եկեղեցուց նուազած ձայնը վերստացաւ իր թափը նոր ղօղանջով, շատ աւելի բարձր եւ լսելի քան կարելի էր երեւակայել:

Յետ-եղեռնեան Նուիրապետական Աթոռներ եթէ պահ մը խոնարհեցան եւ կթեցան ահարկու հալածանքներու տակ, Յարուցեալ Փրկչի կենսատու շնորհներով վերապրող հոյլ մը մեծհոգի հոգեւորականներ, Յեղասպանութենէն ետք, նախաձեռնողները եղան նոր եւ նուիրեալ հոգեւորականներ պատրաստելու վսեմ գործին: Հայ Եկեղեցին 20-րդ դարու առաջին կէսի արհաւիրքներէն դուրս բերին եւ պատուով առաջնորդեցին գայն դէպի 21-րդ դար ու Քրիստոնէութեան Մեծ Դարձի 1700-ամեակը արձագանգեցին աշխարհով մէկ:

**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻ ՀՍԿԱՅ ԵՄ ԽՈՆԱՐՅՈՒԵՅ ԳՈՒՐԳԷՆ ՊՕՂՈՍԻ ՍԱՐԳՍԵԱՆ 1918-2011**

Կարճատեւ հիւանդութիւնից յետոյ 2011 թ. Փետրուարի 20-ին, Կիրակի, առաւօտեան ժամը 9:30-ին իր մահկանացուն կնքեց իմ երկար տարիների աւագ ընկեր ու բարեկամ, հայոց լեզուի եւ գրական-նութեան բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ, գրող Գուրգէն Պօղոսի Սարգսեանը:

Հայրենասէր ու ազգասէր մտաւորականը շատ դժուարին կեանքի ուղի է ունեցել: Նա ինձ պատմել է իրաքում ապրած գողգոթայի մասին:

Գուրգէն Պօղոսի Սարգսեանը ծնունդ է 1918 թ. Իրանի Սարմաստ գաւառի Սաւրա գիւղում: Նոյն տարին Սարգսեան ընտանիքը 1915 թ. Մեծ եղեռնից վերապրած եւ իրան գաղթած վասպուրականցիների հետ տեղափոխուել է Իրաք, հաստատուել Բաքու բազմաբազմաբնակ վայրերից մէկում: Գրաճանաչ է դարձել Բաքու բազմաբազմաբնակ հայկական եկեղեցուն կից բացուած նախակրթարանում: 1938 թ. աւարտել է Պաղտատի ամերիկեան դպրոցը: 1944 թ. հաստատուել է Թեհրանում: 1946 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան: Աւարտել է Երեւանի պետական լեզուաբանական ֆակուլտետը: Անգլերէն է դասաւանդել դպրոցներում, իսկ 1961-ից՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1973 թ. պաշտպանել է թեկնածուական թէզ: 1976 թ. ստացել է դոցենտի կոչում:

1991 թ. Հայաստանից արտագաղթել է ԱՄՆ՝ Լոս Անճելես:

Լոս Անճելեսում նա ունեցաւ եռանդուն գրական գործունէութիւն: Նրա բոլոր գրուածքները սողորուած են հայրենասիրական եւ ազգասիրական շերտ գրացմունքներով:

Մեր ծանօթութեան մօտ 20 տարիների ընթացքում ես նրան ճանաչեցի որպէս հանգիստ բնաւորութեամբ արտակարգ անձնաւորութիւն, որ յարգուեց ու գնահատուեց մտաւորականների կողմից եւ իր օգնութիւնը չինայեց որեւէ մէկին:

Նրա գրչին են պատկանում բազմազան թեմաներով բազմաթիւ գրքեր, որոնցից շատերում նա արտայայտում է հայերի ցաւերն ու հոգսերը: Ահա դրանք. 1973 թ.՝ «Մարաթոնեան վազք», 1993 թ.՝ «Օլիմպիական խաղերի աթլետի-

կական մրցումների պատմութիւնը», 1995 թ.՝ անգլերէնից նրա թարգմանութեամբ լոյս է տեսել Հենրի Լ. Գեյտսի «Յօշոտուած Հայաստան» (կամ՝ «Հոգիների աճուրդը») վէպը, 1996 թ.՝ «Անգլերէնից փոխառուած բառերն ու տերմինները արդի հայերէնում», 1999 թ.՝ «Նոր արեւապաշտներ», 2002 թ.՝ «Ուղղագրութեան բարեփոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր» ուսումնասիրութիւնը, 2003 թ.՝ անգլերէնից նրա թարգմանութեամբ լոյս է տեսել էդուարդ Ս. Լիտլի «Հայկական հարցը» գրքուկը, նոյն թուականին՝ «Գրական յոյգեր», 2005 թ.՝ «Հին ու նոր ցաւեր»:

Այս գրքերով նա համեստ լուծման երդրեց հայկական մշակույթի հարստացմանը:

Գրողն ունի նաեւ անտիպ գրքեր: Ակադեմիկոս Գրիգոր Գուրգաղեանի կեանքի ու գործունէութեան մասին գիրքը չկարողացաւ աւարտին հասցնել: Տարիներ շարունակ պրպտումներ կատարեց: Նրա կեանքի վանի տարիների մասին գրելիս սկսեց ուսումնասիրել բազմաթիւ գրքեր, նախ՝ վանը ներկայացնելու իր հայկականութեամբ եւ հերոսի կապը այդ քաղաքի հետ: Այդպէս էլ այդ գործը կիսատ մնաց: Կեանքի վերջին տարիներին նա ոգեւորուեց Ստալինգրադի ճակատամարտը հայերէնով նուիրելու հայ ժողովրդին եւ այդ նպատակով անգլերէն բազմաթիւ գրքեր ուսումնասիրելուց յետոյ, գտաւ ուզածը եւ չնայած աննախանձելի առողջական վիճակին, թարգմանեց այն մեծ ոգեւորութեամբ ու հասցրեց աւարտին: Գրքի ձեռագիրը պատրաստ է հրատարակութեան:

Համաձայն հանգուցեալի ցանկութեան, նրա մարմինը պիտի տեղափոխուի Երեւան եւ ամփոփուի իր կնոջ կողքին:

Գուրգէն Սարգսեանի մահուան առթիւ խորին ցաւակցութիւն եմ յայտնում նրա դուստրերին՝ Ծովինարին, Կարինէին (Երեւան), եւ նրանց ընտանիքներին ու բոլոր հարազատներին: Նրա յիշատակը յաւերժ կ'ապրի իր ազգային ու հայրենասիրական շնչով արարած ստեղծագործութիւնների շնորհիւ:

Խորին ակնածանքով՝  
**ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ**

Մշակույթի եւ ուսման կեդրոններ եթէ բնաջնջուեցան պահ մը, անոնց փոխարէն ուսման, մշակութային, հասարակական եւ բարեգործական պատուաբեր հաստատութիւններ եկան ընծայելու հայ ժողովուրդին սերունդներու շարք մը՝ հաստատակամ եւ ինքնաբաւ: Քաղաքական գետնի վրայ Ս. Յա-

րութեան երաշխիքը այնքան իրական դարձաւ որքան վերիվայրումներէ ետք հայաշխարհին ընծայուած պատեհութիւնները վերականգնելու, դիմակալելու եւ աննահանջ մեր երթը ապահովելու:

Մեր Ազգի Յարութեան այդ երաշխիքը մեր նահատակները ստուին:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA  
 ԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔՐ ԿՈՒՄԱՅՐԻՒՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ, ԼԵՆԻՆԱԿԱՆ ԵՒ ԳԻՒՄՐԻ



#### ԱՐԻՍՂԱԶԻՆՆԱՆ

Դեկտեմբերի 2-ին Մոսկվայի եւ համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլի եւ Գիւմրու քաղաքապետ Վարդան Ղուկասեանի միջեւ տեղի ունեցած հանդիպման ժամանակ Գիւմրու քաղաքապետը նշել է, որ քաղաքացիներին շատերը հանդէս են գալիս քաղաքը Ալեքսանդրապոլ վերանանելու առաջարկութեամբ:

Այս առաջարկութիւնը լայն հասարակական արձագանք ունեցած Հայաստանի երկրորդ քաղաքում: Ոմանք այն դիտեցին «Հայաստանը ռուսականացնելու հերթական փորձի» համատեքստում: Սակայն դա այդպէս չէ՝ հաշտի առնելով նաեւ այն փաստը, որ ներկայիս անուրը թուրքական ծագում ունի: Վերջին տարիներին աւելի ու աւելի շատ գիւմրեցիներ են խօսում քաղաքին նախկին անունը վերադարձնելու անհրաժեշտութեան մասին:

Իսկ Ալեքսանդրապոլի պատմութեան արմատները հասնում են մինչեւ 1837 թ., երբ կայսր Նիկոլայ Առաջինն անձամբ այցելել է այս վայրը: Անունը տրեւել է ի պատիւ ռուս տիրակալի կնոջ:

Այդ ժամանակ այս վայրում դեռ քաղաք չէր: Այդտեղ վեր էին խոյանում նախանցեալ դարի առաջին քառորդում Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմ վարելու նպատակով կառուցած ամրոցի պատերը: Իրենք՝ թուրքերն այս վայրն անւանել են «Գիւմրի», որը նշանակում է «մաքսակէտ»:

Մաքսակէտից հազար տարի առաջ ներկայիս Գիւմրու տեղում գտնուում էր հին հայկական Կոնմայրի բնակատեղին: Հին յոյն պատմիչ Քսենոփոնը Ք.ա. 5-րդ դարում յիշատակում է Գիւմնիասը՝ «մեծ, հարուստ եւ մարդաշատ» քաղաքը:

Արաբական տիրապետութեան շրջանում 8-րդ դ. հայ պատմիչ Ղեւոնդը յիշատակում է Կոնմայրին արդէն որպէս բնակատեղի:

Թուրքերն աւելի ուշ տիրելով այդ տարածքին՝ թուրքացրել են բնակատեղիի աւանդական անւանումը եւ բնակավայրը կոչել Գիւմրի: «Գիւմրեցի» թրքերէն նշանակում է տուրքեր, հարկեր հաւաքող, ինչպէս նաեւ վաշխառու, դրամափոխ, շորթող:

Տասնամեակներ շարունակ Կոնմայրիի հայերը փորձել են ազատել ինչպէս թուրքական լծից, այնպէս էլ այս բեռից, այսօրն ատելի անւանումից՝ Գիւմրի, եւ

իրենց յոյսը կապել են հաւատակից Ռուսաստանի հետ: 1826-ին նախկին մաքսակէտն ի վերջոյ ազատեց թուրքական լծից:

1840 թ. Ալեքսանդրապոլի ամրոցը պաշտօնապէս հռչակել է քաղաք, իսկ 1850 թ. քաղաքը դարձել է էրիւանի նահանգի Ալեքսանդրապոլ գաւառի կենտրոնը:

Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս եւ Ալեքսանդրապոլ-էրիւան-պոլիֆա երկաթգծի անցկացման հետ կապւած այն նաեւ դարձաւ տրանսպորտային կարեւոր հանգույցներից մէկը:

Հէնց մաքսակէտից Ալեքսանդրապոլ վերանանելուց յետոյ սկսեց այս բնակատեղիի՝ քաղաքի փոխակերպման գործընթացը: Յատուկ որոշմամբ այն զարգացել է Ռոստովի, Կարսի եւ Շուշիի չափանիշներով:

Այդ ժամանակ ընթանում էր Արեւելեան Հայաստանի նոր, բաւական, հետաքրքիր հայի տեսակի ձեւաւորումը, որը ներառում էր հայկական, ռուսական, կովկասեան եւ նոյնիսկ եւրոպական մշակոյթի լաւագոյն գծերը:

Սակայն քաղաքին նախկին անունը վերադարձնելու քաղաքացիների յարաճուն ցանկութիւնը թելադրւած է ոչ այնքան պատմական արդարութիւնը վերականգնելու ձգտմամբ (այդ դէպքում աւելի լաւ կը լինէր այն անւանակոչել Կոնմայրի), որքան քաղաքային մշակոյթի պակասի, քաղաքային արժէքների, աւանդոյթների կորստեան գիտակցմամբ:

«Ալեքսանդրապոլցի» հասկացութիւնը քաղաքային մշակոյթին պատկանելութեան հաստատում է: Եթէ Գիւմրին յայտնի էր միայն իր վաշխառուներով եւ իրենից յետոյ քիչ թէ շատ արժանաւոր անուն չի թողել, ապա Ալեքսանդրապոլը տւել է միտիկ Գիւրջիւնին, քանդակագործ Մերկուրովին, պոէտ Իսահակեանին եւ նկարչուհի Ասլամազեան քոյրերին, որոնց շուտով ամբողջ եւրոպան ճանաչեց:

Ալեքսանդրապոլը դարձաւ արհեստաւորների քաղաք, որտեղ ծաղկում էին աւելի քան հարիւր արհեստ՝ ոսկերչութիւնը, դարբնագործութիւնը, պղնձագործութիւնը, թիթեղագործութիւնն ու ձուլածագործութիւնը: Յատուկ տեղ էին զբաղեցնում շինարարները՝ որմնադիրները, հիւանները: Եթէ եկեղեցիները կառուցուում էին աւանդական ոճով, ապա հասարակական շէնքերն ու բնակելի տները ներա-

ռում էին արդէն նոր հովեր՝ եւրոպական եւ ռուսական:

Հանրապետութեան խորհրդայնացումից յետոյ Լենինական վերանաւորւած քաղաքը մասամբ զրկեց իր արժանիքներից, սակայն ի դէմս հօր «ալեքսանդրապոլեան շերտի» շարունակում էր առանձնանալ միւս շրջանների մէջ:

Քաղաքի հերթական (1990-ականների սկզբին) վերանաւորումը՝ այս անգամ թուրքական Գիւմրի, օբիեկտիւօրէն հասունացած բազմապլանային ճգնաժամի հետ մեկտեղ, վերականգնացրեց թուրքական տիրապետութեան ժամանակաշրջանի խղճուկ եւ նւաստացած գիւմրեցու տեսակը:

Հէնց այս վերակենդանացած կերպարի դէմ են այսօր արտայայտուում բազմաթիւ բնակիչներ, ընդ որում նշում են, որ ներկայիս քաղաքապետը, ով պատրիարք Կիրիլի հետ հանդիպման ժամանակ այս միտքն է յայտնել, երբեք չի կարող դառնալ Ալեքսանդրապոլի քաղաքապետ, նա հենց Գիւմրու

քաղաքապետն է:

Այսօր Գիւմրով ճանապարհորդութիւնը վաշխառուի աշխարհընկալման յաղթանակի ամրագրումն է: Շինարարական բումի յորձանուտում մեծ է ալեքսանդրապոլեան մշակոյթի աւանդական շերտի իսպառ ոչնչացման վտանգը՝ հին շինութիւնները քանդելու կամ դրանք նոր հարուստների ճարտարապետական ճաշակին ենթարկելու միջոցով:

Սակայն եթէ ալեքսանդրապոլցին գիտէր թոյլատրելիի սահմանները, ապա գիւմրեցին նման սահմանափակումներ երբէք չի իմացել ու չգիտի: Հէնց ամենաթողութեան դէմ են հանդէս գալիս Կոնմայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական-Գիւմրու բնակիչները եւ, ցանկութիւն յայտնելով անւանափոխել իրենց հարազատ քաղաքի թուրքական անունը, ուզում են նաեւ վերականգնել իրենց քաղաքի վաղեմի փառքը:

Աղբիւր՝ «ԱրմենիաՆաու» կայք «Յոյս»

#### ՄԱՐԱՇԻ ԱՂԵՏԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ 91-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

Շարունակուած էջ 7-էն

նի մը բախտախնդիրներու կողմէ, եթէ «Յաղթական» անուանուած դաշնակիցներ: Ֆրանսայի եւ Անգլիոյ հօր նեցուկը ունեցած չըլլային անոնք: Դաշնակիցներ վերականգնեցին թուրքիան, պատճառ դառնալով պատմական Մարաշի ամբողջական անկումին, որպէս հայրենիք եւ իբրեւ ազգաբնակչութիւն:

Մեր նահատակներուն պատգամն է կառչած մնալ մեր լեզուին, սատար հանդիսանալ մեր մշակոյթին, տէր կանգնիլ վարդանանքով սրբագործուած մեր ազգային ինքնութեան, ամրապնդել զայն: Ազգովին առաջնորդուել Քարապէթիւններու դէմ Սարտարապատեան կոթողային յաղթանակներու առաջնորդող միասնական ոգիով:

Ափսոս, այդ դժոգակ, Եղեռնը նախորդող տարիներուն՝ չի ցուցաբերեցինք ազգային միասնական ոգի, երբ հայ ժողովուրդը աւելի քան երբէք կարիքն ունէր անոր: Կը հաւատամ, որ շնորհիւ այդ ոգին՝ ցեղապանութիւնը կրնար ինչպէս ի վերջոյ մեր ժողովուրդին: Խաղաղ ու շէն պահել մեր շէնքերը: Սարտարապատը վկայ: Մեր մօտ լոզունքային է եղած ազգային միասնականութեան ստեղծման մեր բոլորի ցանկու-

թիւնը, մեր ազգային կեանքն ներս: Գերիշխող է եղած անմիաբանութիւնը: Գերադասած ենք հատուածականը, մասնակի ձեռքբերումները, ներ-միութենական միակողմանի շահերու հետապնդումը:

Մեր նահատակ հերոսներու արեան կանչն է, սանձել հատուածականը: Գերադասել ընդհանրական շահը: Առաջնորդուել ազգային միասնական ոգիով, որուն անհրաժեշտաբար կարիքն ունինք բոլոր ժամանակներէ աւելի: Նոյն թշնամական կապանքները կան ու կը գոյատեւեն եւ կը խոչընդոտեն մեր հայրենի յառաջխաղացքը եւ հարցականի տակ կը դնեն մեր ապագան Արցախ աշխարհէն մինչեւ Հայաստանի Հանրապետութիւնը: Ներքին անմիաբանութիւնը ու արտաքին թշնամական շրջապատումը կ'արգելակեն մեր յառաջընթացը:

Մեր նահատակներուն արեան կանչն է ազգովին, Սփիւռք - Հայրենիքով մէկ հետապնդել մեր ազգի ընդհանրական բնոյթի հարցերը ամէնուրեւ միշտ: Հոն է մեր յաղթանակը:

Այս պատգամով հաղորդուած՝ կու գանք խոնարհիլ Մարաշի Աղէտի նահատակներուն ինկելի յիշատակին առջեւ, առ ի հանգիստ անոնց յոգնած ոսկորներուն:



### ԱՇԽԱՐՀԻՆ ՅԱՅԿԱԿԱՆ ԳՈՅՆՈՎ ԽՕՍԱԾ ՆԿԱՐԻՉԸ՝ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ

«Յայկական ոգին է, որ միշտ կը խօսի իմ նկարներու մէջ: Ամբողջ աշխարհի համար ես իմ վրձինով կը վերածնեմ Յայաստանը: Ու երբ մենք, ինչպէս բոլորը, փոշի կը դառնանք, մարդիկ կ'ըսեն, հայոց լեռներու որդի՝ ան իր համեստ աւանդը ներդրաւ համաշխարհային մշակոյթի զարգացման»:

Արշիլ Կորքի

#### ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Արմատները՝ իր ծննդավայր Վանի պատմական հարուստ անցեալի եւ քաղաքակրթական հայակերտ ժառանգութեան մէջ գգալով տեւաբար, հայրենի բնաշխարհին յատուկ ակնաթով գոյներն ու նրբերանգները աչքերուն մէջ անթեղած, հայկական արուեստին ակունքները, մասնաւորաբար մանրանկարչութեան վարպետներուն գիծերն ու գոյները, խաչքարերու բարձրարուեստ քանդակները, իրեն համար ներշնչարան դարձուցած եւ Հայաստանի մշտավառ երազը հոգիին մէջ վառ պահած՝ Ամերիկայի աշխարհաքաղաքացիական յորձանուտին մէջ ստեղծագործեց Արշիլ Կորքի՝ իրեն ճակատագրուած ողբերգական կեանքի կարճ տեւողութեան մը

շատ յառաջադէմ էր, որպէսզի իր ժամանակին հասկցուէր: Ես հաստատ կրնամ ըսել, որ անոր շատ մը նկարները աւելի մեծ են, քան Փիքասոյի, Մատիսի, էլ Կրեթոյի նկարները»: (Ուրլըմ Տը Բունիսկ):  
Արշիլ Կորքիի ստեղծագործական յղացումներուն եւ արուեստի ըմբռնումներուն՝ իր ապրած ժամանակէն եւ միջավայրէն առաջ ըլլալու յառաջապահութիւնը՝ նկարիչ ծնած մեծ հոգիի մը թեւաւոր ուսումն էր այդ օրերու Ամերիկայի լուսանկարող, պատճէնահանող միապաղաղ եւ ծանծաղ հոսանքներէն: Հայկական ենթահողով հայ նկարիչին հանձարն է, որ վերացական «էքսպրէսիոնիզմ»ով պեղեց մարդուն ենթագիտակիցն ու ներաշխարհը անկէ լոյս աշխարհ բերելու համար գիծի եւ գոյնի իւրայատուկութեամբ ա՛յն ինչ որ տեսանելիէն անդին էր: Երեւակա-



ւնթացքին: Իր հոգիի թէ ստեղծագործական երանգապնակի գոյներուն մէջ հայկական ծիրանի դեղինը մշտապէս կենդանի պահող հայ մեծ արուեստագէտը՝ իր խորունկ էութեան ձայներուն ունկնդիր՝ բացուեցաւ աշխարհի հին ու նոր քաղաքակրթութիւններուն, մշակոյթներուն, գեղագիտական ու փիլիսոփայական ուղղութիւններուն: Ամբարեց, իւրացուց եւ մշակոյթով յորդուն ստեղծեց իր արուեստի ուրույն աշխարհն ու ուղղութիւնը, որ թէեւ սկզբնական շրջանին չհասկցուեցաւ, բայց հետզհետէ, մահուանէ քիչ առաջ եւ մասնաւորաբար մահուանէն ետք, Ամերիկայի թէ աշխարհի կողմէ ընդունուեցաւ նկարչութեան մէջ նոր խօսք ըսող եզակի արուեստագէտ մը որպէս: Այն չափանիշով, որ «Ան

յութեան մտապատկերը կը ցոլացնեն բնութեան, մարդկային եւ հոգեկան երեւոյթներուն վերացական պատկերացումները: Ահա թէ ինչու վերացականութեան եւ «էքսպրէսիոնիզմ»ի ներդաշնակ համադրութիւնը ամերիկեան հողի վրայ իրագործած հայ արուեստագէտին նորարարութիւնը ամերիկեան արուեստի քննադատութեան կողմէ ի վերջ ընդունուեցաւ՝ իբր արուեստի նոր հորիզոններ բացող ուղեգիծ:

Արշիլ Կորքի՝ վերացապաշտ արուեստի այդ ուղեգիծին համելու եւ այդ ուղեգիծին ընթանալու համար արուեստական ո՛չ մէկ հնարքի դիմեց: Ներքին անդիմադրելի պահանջներուն եւ ժամանակներու ներքոր հրամայականներուն

Շաբ.բ էջ 19

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ (ՈՍՏԱՆԻԿ ԱՏՈՅԵԱՆ) 1904-1948



1930-ին, Նիւ Եորքի մէջ իր սեփական արուեստանոցը ապահովելէ ետք ամբողջութեամբ կը նուիրուի նկարչութեան՝ ստեղծագործական թէ ուսումնասիրական մակարդակներու վրայ:

Այս շրջանէն սկսեալ Արշիլ Կորքիի նկարչական ստեղծագործութիւնները անհատական թէ հաւաքական ցուցահանդէսներու մասնակցութեամբ մեծ յաջողութիւններ կ'արձանագրեն՝ գրառուելով արուեստի քննադատներուն հիացական ուշադրութիւնը:

«Հայկական Սովետական Համայնագիտարան»ը (Գ. հատոր) հետեւեալ գնահատութեամբ կը բնորոշէ Արշիլ Կորքիի գտած ընդունելութիւնը ամերիկեան արդի արուեստին մէջ, «1930-ական թթ. երկրորդ կէսից Կորքու ստեղծած գործերը հեղինակին համաշխարհային հռչակ են բերել, խոր ներգործութիւն ունեցել ամերիկեան արդի արուեստի վրայ եւ որակուել իբրեւ - էպիկական խորհրդապաշտութեան տիեզերական արտայայտութիւն»:

Արշիլ Կորքիին նամակները՝ ուղղուած քրոջ Վարդուշին եւ ամուսինին Կարլին Մուրատեանին՝ կը բացայայտեն մեծ արուեստագէտին հայրենասիրական ապրումներն ու արուեստի ըմբռնումները: Մեծ սիրով կապուած մնացած է Ս. Հայաստանին: Չէ կրցած իրագործել Հայաստան այցելելու իր ցանկութիւնը: Բայց 1932-ին, Ս. Հայաստան ուղարկած է իր ստեղծագործութիւններէն չորսը, իսկ 1941-ին, Կարմիր Բանակին օգնելու նպատակաւ կազմակերպուած վաճառք - ցուցահանդէսին նուիրած է երկու գործեր:

Միայն իր ստեղծագործութիւններով չէ որ ազդած է Արշիլ Կորքի ամերիկեան արդի արուեստին վրայ, այլ պատրաստած սերունդով: Նիւ Եորքի «Մեծ Արուեստի Կեդրոնական Դպրոց»ին մէջ դասաւանդած է գծանկարի եւ գունանկարի յատուկ նիւթեր:

Ամերիկա հաստատուած գերիրապաշտներու հետ կապեր հաստատած է, որոնք մեծ հիացումով անդրադարձած են իր արուեստի նորութիւններուն մասին: Գերիրապաշտութեան հիմնադիրներէն Անտոն Դրեթոն՝ 1945-ին Լեվիի պատկերասրահին մէջ կազմակերպած է Արշիլ Կորքիի նկարներուն եւ քանդակներուն նուիրուած ցուցահանդէս մը:

Իր կեանքի ամէնէն մեծ

Շաբ.բ էջ 19

Աշխարհահռչակ հայ մեծ նկարիչ Արշիլ Կորքի ծնած է 1904-ին, Վանի խորագոմ գիւղը: Հայրը՝ Սեդրակ Ատոյեան 1908-ին, իր չորս զաւակներն ու կինը Վան ձգելով կը մեկնի Ամերիկա՝ թրքական բանակին զինուորագրութենէն խուսափելու համար: Մայրը՝ Շուշանիկ իր չորս զաւակներուն հետ կը մնայ անտէր: Վանի հայկական դպրոցին մէջ կը ստանայ իր նախնական ուսումը: Մայրը մեծ ջանքեր ի գործ կը դնէ, որ Ոստանիկին մէջ յայտնուած նկարչական ձիրքերը ծաղկին: Թուղթ ու գունաւոր մատիտներ կը նուիրէ անոր, որ յաճախ գծելով յառաջանայ նկարչական արուեստին մէջ: Ապագայ մեծ արուեստագէտը մօրը հանդէպ տածած պաշտամունքի հասնող սէրով, որ կը ցոլայ իր արուեստի գործերուն մէջ, կ'արտայայտէ իր անհուն երախտագիտութիւնը:

1915-ին, Մեծ Եղեռնի կոտորածներէն փրկուելու համար, մայրը իր չորս զաւակներուն հետ կը գաղթէ Իգդիր, ապա էջմիածին եւ կը հաստատուի Երեւան: 1919-ին, երբ Ոստանիկ 15 տարեկան պատանի մըն էր, մայրը սովէ կը մահանայ Երեւան: Ծանր վիշտով համակուած, քրոջ Վարդուշին հետ երկրէ երկիր թափառելէ ետք՝ Թիֆլիս, Պոլիս, Յունաստան՝ 1920-ին կը հաստատուի Ամերիկա: Կը միանան հօրը եւ քրոջը: Մինչեւ 1926 յաճախելով Նիւ Եորքի «Արուեստի Կեդրոնական Դպրոցը» աւարտած է ուշագրաւ յաջողութեամբ:

1925-ին, Ոստանիկ Ատոյեան փոխելով իր անունը առած է Արշիլ անունը՝ իսկ ուսւ մեծ յեղափոխական գրող Կորքիի հանդէպ ունեցած համակրանքին որպէս արտայայտութիւն՝ Կորքի մականունը: Արշիլ Կորքի իր ծննդավայր Վանէն յեղափոխական հակում դրսեւորելով համակիր եղած է Հնչակեան յեղափոխական կուսակցութեան եւ այդ ոգին պահած է մինչեւ վերջ: Քրոջ՝ Վարդուշին ամուսինը Կարլին Մուրատեան, որ շարքային հնչակեան գործիչ էր, Արշիլ Կորքիի հետ ոչ միայն հոգեկան գօրաւոր կապերու մտերմութիւն ունեցած է, այլեւ՝ գաղափարական - հայրենասիրական: Աւետիս Նազարբէկեանի հանդէպ ունեցած բացառիկ համարումը կը մղէ Արշիլ Կորքին, որ իր Նիւ Եորքի տան մէջ ամիսներ տեւողութեամբ ապաստան տալ հնչակեան հիմնադիր մեծ դեկավարին, ապրելով անոր գաղափարական - հայրենասիրական շունչին մտերմութեան մէջ: Իր մեծ յարգանքին ապացոյցը կազմեց իր առաջին աղջկան Մարօ անուանակոչումը՝ Մարօ Նազարբէկեանի անունով:

Դիմանկարներու շարքով կը կատարուի Արշիլ Կորքիի յայտնութիւնը արուեստի աշխարհէն ներս: Իր հարազատներու դիմանկարներուն մէջ առաջնահերթ տեղ կը գրաւէ մայրը: Կարօտի եւ տիրութեան յոյզերը գերիշխող կը մնան դիմանկարներու մէջ: Բացառիկ գնահատութեան կ'արժանանայ «նկարիչն ու իր մայրը» ստեղծագործութիւնը, որ այժմ կը գտնուի Նիւ Եորքի ամերիկեան արուեստի թանգարանը:

### ՀԱԿՈՅՆ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՂԱՄԲ

Հայ բժշկապետ Ամիրզովլաթի «Անդրտաց անպէտ» գիրքը, որը միջնադարեան հայկական դեղագիտութեան հանրագիտարան է հանդիսանում (գրքում դեղանունները տրուած են 5 լեզուներով՝ հայերէն, յունարէն, լատիներէն, արաբերէն եւ պարսկերէն), 3500-ից աւելի բուժիչ բոյսերի, կենդանիների եւ հանքային նիւթերի անուանումներ (նաեւ հոմանիշները) ու 100 դեղատոմսեր է պարունակում: Այն բոլոր հիւանդութիւնների բուժման համար, որոնց առաջացման մէջ, այսօրուայ տուեալներով, որոշակի դեր ունի վարակիչ-ալերգիկ գործօնը, Ամիրզովլաթ Ամասիացին օգտագործել է մի շարք բոյսեր, դրանք են՝ կոծոճուկը, կղմուխը, երիցուկը, բարձվենեակը, մշտիկը, ուրցը, խնկեղեգը, սեւ գնդիկը, տատաշը, քարասերմիկը, որոնք յատուկ են Հայաստանի բուսական աշխարհին: Նշեալ բոլոր բոյսերը հարուստ են եթերային իւղերով, վիտամիններով, բուսական հորմոններով եւ այլ ակտիւ նիւթերով, որոնցով էլ պայմանաւորուած է նրանց բուժիչ ներգործութիւնը: Հայ բժշկապետը պարզել է նաեւ մարգարիտը, երնշակի, կուսածաղիկի, արեւադարձի, սորնջանի եւ որոշ այլ բոյսերի հակաուռուցքային յատկութիւնները, բոյսեր, որ այսօրուայ տուեալներով պարունակում են կուսածաղիկի եւ ֆուրոկուսածաղիկի անցնեալներ, ինչպէս նաեւ կոլտիցին եւ վինբլաստին ալկալոիդներ, որոնք օժտուած են հակաուռուցքային ներգործութեամբ:

Ամիրզովլաթը մեծ նշանակութիւն էր տալիս նաեւ այն բոյսերին, որոնք օժտուած են հակաթունային (նարդոս, վաղենակ, երկաթախոտ) եւ տոնուսը բարձրացնող (սղանգ, լոշտակ) յատկութիւններով, որոնք նա միաժամանակ օգտագործել է որպէս վաղաժամ ծերութիւնը կանխող եւ առողջութիւնն ու երիտասարդութիւնը պահպանելու նպաստող հակասկզբնորոշիչ միջոցներ: Նոյն նպատակով նա կիրառում էր նաեւ որոշ բուսական, կենդանական եւ անօրգանական ծագում ունեցող խեղճերը (քաղբանը, սեքպինաճը, անգուժատը, ակնամոմը եւ այլն): Մարմնի տոնուսը բարձրացնելու, վէրքերը ապաքինելու եւ ուռուցքները բուժելու համար Ամիրզովլաթը խորհուրդ էր տալիս օգտագործել մուսիան. բարդ բնական միացութիւն, որ գոյացել է բոյսերի մնացորդներից, կենդանիների աղբից եւ անասնաբուծիչների քաղբայնուց տարբեր երկրների քարայրներում (Պարսկաստան, Աֆղանստան, Միջին Ասիա): Ըստ Ամիրզովլաթի՝ գոյութիւն ունեն 10 մերձակայ քարայրներ, ուր տարբեր տեսակի եւ տարբեր անուանումներով մուսիաներ են պեղուած: Նա չի նշում այդ անունները, սակայն մուսիա յայտնաբերուել է նաեւ Հայաստանում՝ Եղեգնաձորի քարայրներում:

#### ԿԱՂԱՄԲԸ

Ըստ Ամիրզովլաթ Ամասիացու, կաղամբը սրում է տեսողութիւնը, օգնում է գլխի ցնցումների բուժմանը: Տերեւները քացախի հետ նպաստում են ատամնացալի

վերացմանը: Կաղամբը պարունակում է՝ ջուր՝ 92-93%, ազոտային նիւթեր՝ 1-1,2%, ճարպեր՝ 0,1-0,15%, շաքարներ՝ 1,8-2,1%, էքստրակտային նիւթեր՝ 2,4-2,6%, բջջաթաղանթ՝ 0,04-0,06%, մոխրացող մնացորդ՝ 0,5-0,6%, 0,03 մգ A, 0,16-0,26 մգ B1, C 25-61 մգ, P, K, B6 եւ U վիտամիններ, ֆերմենտներ, 118 մգ կալիում, 13 մգ մագնեզիում, 12 մգ ֆոսֆոր, 1 մգ երկաթ, պղինձ, ցինկ:

Հին ժամանակներից կաղամբն օգտագործուել է բուժական նպատակներով: Հիւթն օժտուած է ճարպերը ճեղքելու եւ մարսողութիւնը բարելաւելու յատկութեամբ: Հոռոմէական գրող Կատոնը նշում է, որ կաղամբը հոռոմէացիների համար ծառայել է ոչ միայն որպէս սնունդ, այլ որպէս դեղամիջոց՝ բոլոր հիւանդութիւնների դէմ:

Այդ էր պատճառը, որ հոռոմէացիները շուրջ 600 տարի առանց դեղերի էին ապրում: Նրանց համոզմամբ՝ կաղամբն ընդունակ է վերացնել անքնութիւնը, գլխացաւերը: Մեծ քանակութեամբ կաղամբ օգտագործած երեխաներն աճում են արագ եւ առանց հիւանդութիւնների:

Ըստ Դիոսկորիդի՝ հում կաղամբը վերացնում է պնդութիւնը եւ կարգաւորում աղիքների աշխատանքը, իսկ եփածն առաջացնում է պնդութիւն:

Հում կաղամբը կարգաւորում է նիւթափոխանակութիւնը: Ըստ Բարտոլինիի՝ եթէ թոյլ աճող, վատառողջ երեխային սնեն կաղամբով եւ լողացնեն ջրի հետ խառնած մէզով, նա շատ արագ կ'առողջանայ: Ըստ բուսական ժողովրդական բժշկութեան՝ տրորուած կաղամբը ձուի սպիտակուցի հետ խառնելուց յետոյ դրուած է ամէն տեսակի այրուածքների, խոցերի վրայ, իսկ կաղամբի արմատի մոխիրը սննդի մէջ օգտագործելու դէպքում հալեցնում է քարերը:

Թթու դրած կաղամբի հիւթն օգնում է ընկնաւորութեան դէմ, թարմ հիւթը՝ գորտնուկների, խուպոտութեան դէմ է: Սերմերը ճիճուասպան են:

Կաղամբի հիւթը կիրառուում է որպէս ստամոքսի ու աղիների բուժամիջոց:

Թարմ հիւթը նպաստում է խոցերի արագ փակմանը, բարելաւում նիւթափոխանակութիւնը, բարձրացնում ստամոքսահիւթի թթուայնութիւնը, իսկ ողողումների ձեւով օգնում է կոկորդի բորբոքման դէպքում: Կաղամբը նպաստում է նաեւ աթերոսկլերոզի բուժմանը: Հում ծեծուած տերեւները ցաւոտ տեղերին դնելուց հանգստացնում են ցաւերը:

Ըստ բնաբոյժ Ուոքերի՝ եթէ կաղամբի թարմ հիւթի ընդունումից յետոյ օրգանիզմում զգալի են առաւելում, ուրեմն աղիները բուժման կարիք ունեն՝ պէտք է ամէն առաւօտ սոված վիճակում խմել 0,5-1 բաժակ կաղամբի հիւթ եւ 1-2 ժամ յետոյ հոգնաչով աղիների լուացում կատարել: Նա նշում է, որ 50 կիլոգրամ եփուած կաղամբն իր սննդային արժէքներով չի կարող համեմատուել 300 գրամ թարմ հիւթի հետ: Նա թարմ հիւթն օգտագործել է նաեւ ուռուցքների բուժման համար:

### ԿԼԱՌԻՍՏՐՈՖԻԱ

Վախը մարդու հոգեկանի անբաժան բաղադրիչներից է, այն մարդու բնածին ինքնապաշտպանական բնազդ է: Սակայն յաճախ այն հիւանդագին է դառնում եւ քայքայում մարդու անհատականութիւնը, վնասում վերածուելով հիւանդութեան կամ էլ լուրջ խանգարման: Վախը կարող է առաջանալ միջատների, սողունների, մթութեան, բարձրութեան հանդէպ: Յաճախ կարելի է հանդիպել տարածութիւններից վախի, այսինքն՝ կլաուստրոֆոբիայի դէպքերի:

Կլաուստրոֆոբիան նոպաչաձեւ բնոյթ ունի եւ առաջանում է փակ տարածքներում եւ մեծաքանակ մարդկային կուտակումների դէպքում (ամբոխի, հերթի մէջ):

Այն յանկարծակի է սկսում, եւ մարդը կորցնում է ինքնակառավարումը, առաջանում է խուճապի, շնչահեղձութեան զգացում:

Այդ մարդիկ սկսում են խուսափել նեղ, փակ տարածքներից, վագոններից, մետրոյից, վերելակից, նրանց հետապնդում է կլաուստրոֆոբիայի վախը: Նոպաներն ուղեկցում են վեգետատիւնեարդային համակարգի վառ դրսեւորումներով, ինչպիսիք են առատ քրտնարտադրութիւնը, բերանում չորութիւնը, դողը, սրտխփոցը, շնչարգելութիւնը: Մակերի կամ ներում արտադրուող աղբնալինը կտրուկ նեղացնում է անօթները՝ առաջացնելով գլխապտոյտ եւ ուշազնացութեան վիճակ:

#### Կլաուստրոֆոբիայի առաջացման պատճառները

Կլաուստրոֆոբիան միւս ֆոբիաների (վախերի) նման մասնկուց է գալիս: Դեռեւս լիովին պարզ չեն դրա առաջացման պատճառները, սակայն ակնյայտ է, որ այն ուժեղ սթրես է, որն անկառավարելի վախի նոպա է առաջացնում: Եւ քանի որ այն հիմնականում վաղ մանկութեան տարիներին ապրած վախի հետեւանք է, այդ իմֆորմացիան ենթագիտակցական մակարդակ է տեղափոխուում, եւ մարդուն մնում

է մի այն սովորել պայքարել դրա ախտանշանների դէմ:

#### Կլաուստրոֆոբիայի դեմ պայքարի միջոցները

Կլաուստրոֆոբիայի դէպքում համալիր բուժում է են թաղրում՝ հոգեթերապեւտի ու հոգեբանական օգնութեան միջամտութեամբ: Հոգեթերապեւտը, իհարկէ, դեղորայքային բուժում է առաջարկում (հակադեպրեսանտներ):

Հոգեբանը կիրառում է մի շարք տեխնիկական հնարքներ, որոնք օգնում են նուազեցնելու մարդու հոգեվիճակի վրայ վախի բացասական ազդեցութիւնը. դրանցից են հիպնոթիկ տրանսի վիճակը, լոգոթերապիայի մեթոդները:

Հիւանդին հիպնոթիկ վիճակի բերելով՝ հոգեբանը թուլացնում ու հանգստացնում է նրան, փորձում հեռացնել վախի պատճառը, ներշնչել մարդուն սեփական ուժերի նկատմամբ վստահութիւն:

Դրանցից է սիստեմատիկ դե-սենսիբիլիզացիան, որի էությունը հետեւեալն է. սովորեցնել հիւանդին թուլանալու տարբեր մեթոդներ, որոնք ինքը կարող է կիրառել ֆոբիայի նոպայի ժամանակ: Մարդն ինքը պէտք է գիտակցի իր վախի աստիճանը եւ չընկնի խուճապի մէջ:

#### Ի՞նչ պէտք է աճել նոպայի ժամանակ

Փորձէք թուլանալ, կարգաւորել շնչառութիւնը (շնչէք քթով՝ ուշադրութիւնը սեւեռելով օդի անցուղիների վրայ): Խուճապի մի մատուցէք՝ վերեւ նայելով, աւելի լաւ է ուշադրութիւնը սեւեռել ձեր տեսողութեան դաշտում գտնուող որեւիցէ առարկայի վրայ: Պէտք է սովորէք դեկավարել ինքներդ ձեզ ու ձեր մտքերը: Պակաս կարեւոր չէ նաեւ երեւակայութեան գործօնը:

Սովորաբար այն յանկարծակի է առաջանում եւ նոյն կերպ էլ աւարտում է: Սակայն դա անուշադրութեան մատնելու պատճառ չէ: Դիմէք հոգեբանի կամ հոգեթերապեւտի՝ որակեալ օգնութիւն ստանալու համար:



## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

### PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՑՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, միւսչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

### Մանրամասների համար հեռաձայնել՝

## (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### ՄԱՐՏԻ



ԵՂԻԱ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆ  
(Ծնեալ 1944 Դամասկոս, Սուրիա)

Խոր ցաւով կը գոժենք ԵՂԻԱ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆԻ մահը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 27 Փետրուարի առաւօտուն, Պաթոն Ռուժի մէջ: Թաղման կարգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 2 Մարտ, 2011ին, Լուիզիանայի Պաթոն Ռուժ քաղաքի Ս. Կարապետ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ, որմէ ետք հանգուցեալի մարմինը փոխադրուցաւ Եկեղեցւոյ կից հայկական գերեզմանատունը:

- Սգակիրներ՝ Այրին Մարալ Կիւլիւմեան Պարուսալեան (Պաթոն Ռուժ) Զաւակները Աբրահամ եւ Փիէր Պարուսալեան (Պաթոն Ռուժ) Դուստրը՝ Վարդենի Զաֆէր Ֆարահ եւ զաւակները (Պաթոն Ռուժ) Մայրը՝ Վարդիթեր Օգնայեան Պարուսալեան (Դամասկոս) Քոյրը Մարի եւ Նորայր Խաչատուրեան եւ զաւակները (Լոս Անճելոս)
- Քոյրը Աստղիկ Պարուսալեան (Դամասկոս) Եղբայրը՝ Ժիրայր Թրէյս Պարուսալեան եւ զաւակները (Դամասկոս) Աներ մայրը Անժէլ Կիւլիւմեան (Պաթոն Ռուժ) Խնամին՝ Ժոզէֆ եւ Սամիրա Ֆարահ եւ զաւակները (Դամասկոս) Աներորդին Տէր եւ Տիկ. Արշակ Կիւլիւմեան եւ զաւակները (Դամասկոս)
- Աներորդին Տիար Սարգիս Կիւլիւմեան (Պաթոն Ռուժ) Քենին Եւա եւ Ֆարէս Սարհան եւ զաւակները (Պաթոն Ռուժ) Քենին Սօսի եւ Ճոնի Գալթաքեան եւ զաւակները (Պաթոն Ռուժ) եւ համայն Պարուսալեան, Կիւլիւմեան, Օգնայեան, Խաչատուրեան ընտանիքները, հարազատները, բարեկամները եւ ծանօթները:

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ԵՂԻԱ ՊԱՐՈՒՍԱԼԵԱՆԻ մահուն տխուր առիթով (մահացած Լուիզիանա) Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Նորայր եւ Մարի Խաչատուրեաններուն, Միհրան եւ Սեւակ Խաչատուրեաններուն եւ համայն հարազատներուն:

### Ո՞Վ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆԻ

Շարունակուած էջ 13-էն

հանրապետութիւն ունենալով հանդերձ, որն ունի բոլոր հնարաւորութիւնները ցանկացած հարցեր լուծելու հայրենիքում, անուժ է արգելելու հային խորթ երաժշտութիւնը...:

Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի Հայաստանի կառավարութեան անտարբերութիւնը այս եւ նման հարցերի նկատմամբ, որոնցից մէկի մասին էլ իր անհանգստութիւնը յայտնեց սիրուած ու յայտնի կոմպոզիտոր Սասուն Պասկեւիչեանը նոյն հեռուստաժրագրով, նոյն օրը երեկոյան ժամը 8-ին հաղորդող լուրերի ժամանակ: Նրա եւ ատրպէյճանական երաժշտութեան երգահան Վահրամ Պետրոսեանի բանավէճը մամլոյ ասուլիսի ժամանակ շատ տհաճ վերջաբան ունեցաւ: Պրն. Պետրոսեանը յայտնեց, որ ինքը, ընկերները եւ շրջապատը սիրում են այդ երաժշտութիւնը, իսկ պրն. Պասկեւիչեանը յայտարարեց, որ Վահրամի նմանները կործանում են տանում հայ երաժշտութիւնը...: Նշեմ, որ պրն. Սասուն Պասկեւիչեանը հայրենիքին նուիրուած ազգային գործիչ է, որի վառ ապացոյցն է նաեւ նրա Լոս Անճելոսում ապրած ժամանակ, մի քանի մտաւորականներով մեր միասնա-

կան ազգային գործունէութիւնը, որից յետոյ նա գերադասեց ապրել հայրենիքում:

Բարեբախտաբար, կոմպոզիտորի եւ երգահանի բանավէճը անհետեւանք չմնաց: Հայաստանի հեռուստաժրագրերի յաջորդ օրերի հաղորդումների ժամանակ, Երեւանում հնչեցին թղթակիցները, մշակութային, քաղաքական եւ անվտանգութեան գործիչների առողջ ելոյթներ, որոնք դատապարտեցին երգահանի արարքը, այն անուանեցին դաւաճանութիւն եւ առաջարկեցին հայ մշակոյթը պաշտպանել՝ նրա յօրինած եւ այլ նման երաժշտութիւնները խստիւ արգելել ցուցադրել հեռուստաթերով, ինչպէս հայկական բանակն է պաշտպանում հայրենիքի սահմանները: Սա ուրախալի լուր է, որին աւելցնում եմ մի իրակախութիւն: Լոս Անճելոսում իմ ազգային հասարակական գործունէութեան ընթացքում Լիբանանի հայ մտաւորականների հետ շփուելիս, նրանք պատմել են, թե Պէյրութում հայ ազգային գործիչները չգրուած օրէնքներով ինչպէս էին լուծեցում թրքական երաժշտութեան հնչումը հայկական տներում ու գործատեղիներում: Հայաստանում պետութիւն ունենալով հանդերձ չի լուծվում այդ հարցը (°)...: Բոլոր հարցերի կողքին, պե-

### ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՅՆՈՎ ԽՕՍԱԾ ՆԿԱՐԻՉՈՒՄ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ

Շարունակուած էջ 17-էն

պատասխանելու համար է, որ ինքնարտայայտութեան յղացք ընդունեց վերացականութիւնը, որ ենթագիտակիցով ապրուած եւ զգացուած փորձառութիւններու եւ տպաւորութիւններու անդրաշխարհնէր: Ահա թէ ինչո՞ւ Ֆրանսացի գերիւրապաշտները եւս հոգեկցութիւն գտան Արշիլ Կորքիի ճախրող վերացումներուն մէջ եւ իրենց հիմնադիրը՝ բանաստեղծ Անտրէ Պրըթոնի վկայութեամբ սուին լաւագոյն գնահատութիւնը. «Կորքին Միացեալ Նահանգներու արուեստի պատմութեան մէջ երբեւիցէ եղած նկարիչներէն ամենամեծն է ու իւրայատուկը»:

Արուեստի ունէ քննադատէ եւ մեկնողէ աւելի Արշիլ Կորքի ինքն է, որ իր բազմաթիւ նամակներուն մէջ, անդրադառնալով արուեստի հարցերուն, բնութագրած է իր արուեստին հուժիւնը կազմող վերացականութիւնը. «Մարդկային աչքը հեշտութեամբ կ'ընկալէ շօշափելին: Մարդկային միտքը լճացում կ'ապրի եթէ չունենայ ստեղծագործական երեւակալութիւն եւ բաւարարուի սոսկ ֆիզիքական տեսողութեամբ: Վերացական արուեստը կ'օգնէ մարդուն ընկալելու տեսանելիէն այն կողմ ինկածը, անջատելու անսահմանը սահմանափակէն»:

«Տեսանելիէն այն կողմ ինկածը եւ սահմանափակէն անսահմանը անջատելու» մտասեւեռումը իր ստեղծագործական որոնումներուն մղումը դարձուցած Արշիլ Կորքի նուաճեց նկարչութեան անկոխ անջրպետները, որուն համար ալ, անոր արուեստին վաւերականութեան հաստատումէն ճանաչումը՝ նկարչութեան մէջ վերայայտնուած նո՞ր ու ինքնուրո՞յն աշխարհի մը համազօր հռչակուցաւ: Ու այդ հռչակը աշխարհով մէկ տարածւելով Ամերիկայէն Եւրոպա,

Եւրոպայէն հասաւ... Երեւան...:

Իր արուեստին միջազգային տարողութեան առնթեր՝ զինք որպէս հայ կազմող ազգային էութեան գոյներուն հետ ո՛չ միայն հոգիի հարազատութիւն եւ արեան հաւատարմութիւն պահեց, այլեւ՝ աշխարհին հետ հայկական գոյնով խօսելով հայութեան եւ Հայաստանի ոգին վերապրեցուց:

Նիւ Եորքի խայտաբղէտ ցեղային խառնարանին մէջ գաղափարապաշտ հայու գիտակից ազգայնականութեան մը հաստատականութեամբ ու հայոց լեռներու արժանաւոր գաւակը մնաց ու պահեց ինքզինք. «Երբեմն ես կը յաջողիմ բռնել հայրենիքի գոյները: Երբեմն կը ձախողիմ: Բայց ճիգը անհրաժեշտ է, պատասխան վրայ բռնելու հարուստ գոյները մեր պտուղներուն՝ ծիրանի, դեղձի, խնձորի, խաղողի: Հարուստ գոյները մեր բոյսերուն ու բանջարեղէնին, մեր հատիկներուն եւ ծաղիկներուն: Տեւականօրէն ես կը ջանամ վերարտադրել Հայաստանի գոյները իմ գործերուս մէջ»:

Մինչեւ վերջ Հայաստանի գոյներով կախարդուած, Հայաստանի հողին բոյրերով ներշնչուած ըլլալով եւ մնալով, Արշիլ Կորքի չկրցաւ իր կեանքը եւ ստեղծագործական լինելութիւնը պատկերացնել հայրենիքէն դուրս, օտար հորիզոններու եւ երկինքներու շուրջ գոյներուն տակ. «Օր մը պիտի վերադառնամ: Թող քիչ մը եւս ինքզինքս գտնեմ, ու Հայաստան պիտի վերադառնամ»: Չկրցաւ վերադառնալ, բայց մնալով արտասահման հոգիին եւ Հայաստանի գոյներով ծարաւ աչքերուն մէջ պահելով հայկական ոգին աշխարհին հետ հայկական գոյնով խօսեցաւ եւ արուեստի թանկարժէք ստեղծագործութիւններով բերաւ իր նշանակալից նպաստը համաշխարհային մշակոյթի զարգացման:

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ

Շարունակուած էջ 17-էն

յուսախաբութիւնը ապրած է 1946-ին, երբ Շերմանի իր արուեստանոցին մէջ ծագած հրդեհին հրկիզուած են 36 նկարչական գործեր: Շատ չանցած ի յայտ եկած է քաղցկեղի հիւանդութիւնը: Հակառակ հիւանդութեան չէ դադարած ստեղծագործելէ: Մասնակցած է 1946-ին, Նիւ Եորքի «Ժամանակակից Արուեստի թանգարան»ի ցուցահանդէսին:

1948-ին կ'ենթարկուի ինքնաշարժի արկածի՝ կորսնցնելով աջ ձեռքը: Չկարենալ ստեղծագործելու

տառապանքը մէկ կողմ է, իր անկարելից ամերիկացի կնոջ երկու զաւակներով տունէն հեռացումը միւս կողմէ՝ անկրելի յուսահատութեան առաջնորդելով մեծ արուեստագէտը կը մղեն, որ ան անձնասպանութեամբ վերջ տայ իր ստեղծագործական հարուստ ներաշխարհով եռեկփող կեանքին, 1948-ին, Յուլիս 21-ին, երբ տակաւին 41 տարեկան էր: Ստեղծագործական լիութեամբ յատկանշուող տարիք մը:

Մահունէ առաջ, ձախ ձեռքով արձանագրուած վերջին խօսքը կ'ըլլայ. «Մնաք բարով, սիրելիներս...»:

Հաստատելու նրա նկատմամբ: Լաւատես ենք այս հարցում, քանի որ առողջ ձայները վճռական են Հայաստանում եւ սփիւռքում այն իրագործելու համար:

տութիւնը պատասխանատու է նաեւ հայ մշակոյթի օտարացման համար եւ պարտաւոր է ամէն գնով միջոցներ ձեռնարկել այն արգելելու եւ պետական խիստ վերահսկողութիւն

**ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէմէյի 380-րդ կայանից**

LET'S PUT PASADENA FIRST

**C** KHATCHIK "CHRIS"  
**CHAHINIAN**

**FOR**  
**CITY**  
**COUNCIL**

Հայ գաղութին  
Հայ գաղութին  
համար

WWW.CHAHINIANFORCITYCOUNCIL.COM

Խաչիկ «Քրիս» Շահինեան եղած է Փասադինայի բնակիչ աւելի քան 20 տարիներ: Փոքր գործառքի սեփականատէր է, համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն եւ ընտանիքի հայր: Խաչիկ եւ իր կինը՝ Ռիթան, ունին երեք զաւակներ՝ բոլորն ալ յաճախած են Փասադինայի հանրային վարժարանները:

Համայնքային ծառայութիւններուն մաս կը կազմեն հետեւեալները.

- 2007էն ի վեր վարչութեան անդամ՝ 4րդ Շրջանի, Փասադինայի Համայնքի Ներթափանցման Միութեան (Pasadena Community Access Corporation):

- Հիմնադիր՝ «Հայ Ինքնութեան Հունձք»ի (Armenian Identity Harvest):

- Համայնքին ծանօթ, 2010ի ԱՄՆ Մարդահամարին օժանդակից:

- AYSOի կամաւոր մարզիչ:

- Put Pasadena First Խաչիկ Շահինեան գորակիզ կը կանգնի փոքր գործառքներու:

- Վարժարաններու Բարձր Որակե Գլխաւոր Նախագահութիւնն է

- ԹԱՂԵՐՈՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԹԵՎՈՒԹԵԱՆ ԿԱՆՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆԱԳԵՐԹ ԵՆ

Օգտուելով ղեկավարման փորձառութենէն, Շահինեան կը ցանկայ մեր համայնքին մէջ այս կարեւոր նպատակներուն հասնիլ: Կը խնդրուի Փասադինայի մասին ձեր հոգերն ու հարցերը կիսել Խաչիկ Շահինեանի հետ, հեռաձայնելով անոր՝ (626) 399-1799 թիւին, կամ գրել հետեւեալ եմակին (Ելեկտրոնային նամակ) [chahinianforcitycouncil@gmail.com](mailto:chahinianforcitycouncil@gmail.com)

**Միա՛կ Հայ թնկնածուն, որ կը վայելէ Հայ համայնքին աջակցութիւնը**

*Քառասնամեայի Հայ Գաղութագրութեամբ*

**Քուէարկեցէք Խաչիկ «Քրիս» Շահինեանին Մարտ 8ին**

**Չէր քուէն՝ ձեր ձայնն է**



Զախէն՝ Ստառ, Խաչիկ «Քրիս», Լարա, Ռիթա, Սեակ

